Բ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԳՆԴԱՊԵՏ ՄԱԹԵՎՈՍ ՄԱԴԱԹՅԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

№ МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ 6

Б. МЕЛКОНЯН

ПОЛКОВНИК МАТЕВОС МАДАТЯН
(1908—1954)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1956

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№	ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ	6

9(47)27
Մ-53

ՍՏԱՑՎԱԾ Է 1961 Թ.

Բ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ա II 39780

ԳՆԴԱՊԵՏ
ՄԱԹԵՎՈՍ ՄԱԴԱԹՅԱՆ
(1908—1954)

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1956

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

ՀՈՒՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՅ ԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

1941—1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, հայ ժողովրդի զավակները, Սովետական Միության մյուս բոլոր ժողովուրդների զավակների հետ միասին, ինչպես ռազմաճակատում, այնպես էլ թիկունքում, իրենց անձնուրաց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին մեր սոցիալիստական հայրենիքի անկախությունը և սովետական ժողովրդի ազատությունն ու պատիվը պաշտպանելու գործում։ Նրանք նույնպես անմահ սխրագործությունների բազմահազար օրինակներ գրեցին Հայրենական պատերազմի պատմության տարեգրության մեջ։

Պատմության մեջ դեռևս չտեսնված ճակատամարտերի բոցերում ծնվեցին, աճեցին ու կոփվեցին Սովետական Բանակի տասնյակ հազարավոր հրամանատարական կադրեր, որոնց շարքում քիչ չէին նաև հայ ժողովրդի խիզախ որդիները։ Նրանց թվում յուր համեստ տեղն է գրավում հայ ժողովրդի արժանավոր զավակ, Ստալինգրադի պաշտպանության, Բեռլինի գրավման և Պրագայի մարտերի մասնակից, իր դիվիզիայով փառքի արժանացած, գվարդիայի գնդապետ Մաթևոս Մադաթյանը, որը 1954 թ. զոհվեց իր մարտական դիրքերում, դեռևս իր կյանքի ծաղկուն շրջանում։

Սույն գրքույկը նվիրում ենք Մ. Մադաթյանի հիշատակի հավերժացմանը, որի մեջ համառոտակի շարա-

դրել ենք նրա կյանքն ու ռազմական գործողությունները Սովետական Բանակի շարքերում։

Մոտ քառորդ դար հավատարմությամբ ծառայելով իր Հայրենիքին՝ Սովետական պանծալի Բանակի շարքերում, Մադաթյանը սովետական ժողովրդի ազատագրական մեծ պատերազմում բարձր պահեց կոմունիստի կոչումը, նվիրվածությունը իր ժողովրդին։ Մադաթյանի մարտական ընկերները սիրով ու հիացմունքով են խոսում նրա մասին, որպես մարդու և հրամանատարի, նրա ընկերական, զգայուն բնավորության, կարեկից սրտի մասին։

Մ. Մադաթյանի մարտական կյանքը մեր ժողովրդին ու Հայրենիքին անձնազոհությամբ ու պատվով ծառայելու հիասքանչ օրինակ է՝ մեր երիտասարդությանը դաստիարակելու և ոգեշնչելու գործում։

* * *

Մաթևոս Արիստակեսի Մադաթյանը ծնվել է 1908 թվականի նոյեմբերի 14-ին Հայկական ՍՍՌ Աղինի շրջանի Սոգյութլու (ներկայումս Սառնաղբյուր) գյուղում, աշխատավոր գյուղացու ընտանիքում։

Մ. Մադաթյանը տաս տարեկան էր, երբ հայ ժողովուրդը մի նոր ահավոր մղձավանջ և ավերածություն ապրեց։ Անդրկովկասի կառավարող դասակարգերը, բուրժուա-նացիոնալիստական պարտիաների՝ դաշնակների, մենշևիկների, մուսավաթականների գլխավորությամբ երկրամասը անջատեցին Սովետական Ռուսաստանից, այն հանձնեցին գերմանա-թուրքական նվաճողների հոշոտմանը։

Թուրքական ենիչերիները, օկուպացնելով Հայաստանի մի զգալի մասը, ավերում էին շրջանները, սրի էին քաշում բազմահազար ծերունիների, կանանց, երեխաների, սպանում ծաղիկ հասակ ունեցող տղամարդ-

ինչ։ Այդ սարսափներին է ենթարկվում նաև Սոգյութ-լու գյուղը։ Թուրք բանդիտների ձեռքով սպանվում են նաև Մաթևոսի հայրը և երկու հորեղբայրները։

Հայ ժողովուրդն ավելի սարսափելի օրեր ապրեց դաշնակների կառավարության օրոք։ Սովը, համաճարակը, աղքատությունը բնաջնջում էին աշխատավոր մասսաներին։ Երկիրը գտնվում էր կործանման եզրին։ Հայաստանի աշխատավորներն իրենց փրկությունը սպասում էին միայն Սովետական Ռուսաստանից և պայքարում էին Հայաստանում Սովետական իշխանություն հաստատելու համար։ Եվ ահա հասավ այդ օրը։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, հայ ժողովուրդը տապալեց դաշնակների ատելի տիրապետությունը, ազատվեց թուրքական ջարդերից, վերականգնեց իր պետականությունը. և աղատ բարգավաճման հնարավորություն ստացավ։ Ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ Մադաթյանի ընտանիքի համար ստեղծվեց աղատ ու երջանիկ կյանք։

Տարիներն անցնում էին. Մաթևոսը մեծանում էր։

Կրակոտ ու խելացի պատանին լի էր ուսման ծարավով։

Մաթևոսը չորս տարի սովորեց գյուղի դպրոցում։ Նա ընդունակ աշակերտ էր, հափշտակությամբ էր լսում մեր ժողովրդի պատմության մասին, աղատության համար մղվող պայքարում նրա քաջարի դավակների սխրագործությունների մասին։ Փոքրիկ Մաթևոսը սիրով էր զբաղվում նաև մյուս առարկաներով։

1924 թ. մարտին գյուղի կոմերիտական կազմակերպությունը Մ. Մադաթյանին ընդունեց Լենինյան Կոմերիտմիության շարքերը։ Շատ ժամանակ չանցած, իր ակտիվ ու նվիրված աշխատանքի շնորհիվ, Մաթևոսն ընտրվեց կոմերիտմիության կազմակերպության քար-

տուղար։ Նա լավ էր աշխատում. մոբիլիզացնում էր երիտասարդության ուժերը և պարտիական կազմակերպության ղեկավարությամբ օգնում էր գյուղում կատարվող հասարակական-քաղաքական աշխատանքներին։

1929 թվականին Մադաթյանն ընդունվեց Սովետական Միության Կոմունիստական պարտիայի շարքերը իբրև պարտիայի անդամության թեկնածու, իսկ 1930 թվականին կանչվեց Սովետական Բանակ՝ հերթական զինվորական ծառայության։

Սովետական Բանակի շարքերում նա ձեռք է բերում անհրաժեշտ ռազմական դիտելիքներ։ Աշխույժ, ուշիմ ու եռանդուն այդ երիտասարդը մեծ ձգտում ուներ պրոֆեսիոնալ զինվորական դառնալու։ Նա համառորեն բարձրացնում էր իր ռազմա-քաղաքական դիտելիքները, փայլուն առաջադիմություն էր ցույց տալիս ռազմական դործի մեջ։ Շատ էր հետաքրքրվում աչքի ընկած զինվորական դործիչների կյանքով, պատերազմների պատմությամբ։ Մեծ սիրով ու հաճիշտակությամբ էր կարդում Ֆուրմանովի «Չապաև», Օստրովսկու՝ «Ինչպես էր կոփվում պողպատը» ստեղծագործությունները, Շչորսի մասին դրված աշխատությունները և այլն։

Մ. Մադաթյանը երազում էր մտնել որևէ ռազմական դպրոց, և ահա նրա ցանկությունը կատարվում է։ 1931 թվականին նա ընդունվում է Թիֆլիսի Անդրկովկասյան հետևակային ռազմական դպրոցը։ Շատ կարճ ժամանակամիջոցում նա այստեղ իրեն դրսևորում է որպես առաջավոր սովորողի, աչքի է ընկնում նաև իր կարդապահությամբ։ Նույն թվականի հոկտեմբերի 25-ին Մ. Մադաթյանը դիմում է ներկայացնում դպրոցի պարտիական կազմակերպությանը՝ պարտիայի անդամ ընդունվելու մասին։

Նա իր դիմումում գրում է. «Ցանկանում եմ հրամանատար դառնալ միայն որպես կոմունիստ։ Խոստա-

նում եմ սովորել այնպես, ինչպես պահանջվում է կոմունիստից»։

Դառնալով Կոմունիստական մեծ պարտիայի անդամ, Մաթևոսը ավելի է լցվում հայրենիքին անձնուրաց ծառայելու վեհ ցանկությամբ։ Իր պետերի առաջադրանքները կատարում է միայն գերազանց ցուցանիշներով։

Նա մեծ ջանասիրությամբ էր ուսումնասիրում ռազմական արվեստը։ Երբ ավարտեց ուսման ընթացքը, նա դասակի հրամանատարի կոչում ստացավ և նշանակվեց հայկական դիվիզիայի՝ Լ. Մխչյանի անվան առաջին գնդի վարժական վաշտում՝ դասակի հրամանատարի պաշտոնով։

Մաթևոս Մադաթյանի դասակն ամբողջ գնդում աչքի էր ընկնում իր մարտական ու քաղաքական դերազանց պատրաստությամբ։ Դասակի հրամանատար Մադաթյանը առանձին ուշադրություն էր դարձնում իր մարտիկների ռազմական տակտիկայի ուսուցման վրա։ Տակտիկական պարապմունքների ժամանակ ստեղծում էր դրոհող, «հակառակորդին» շրջապատող ջոկատներ և կատարելագործում մարտիկների դրոհելու, շրջափակելու հմտությունը։ Ուսուցման մեջ բացառիկ ուշադրություն դարձնելով զինվորի տակտիկական ու ֆիզիկական պատրաստականության վրա, նա իր դասակի մարտիկների մեծ մասին դարձնում է սնայպերներ։ Մադաթյանը դիվիզիայի լավագույն սնայպերներից էր։ Հետագայում նա նշանակվում է հայկական դիվիզիայի առաջին գնդի սնայպերական վաշտի հրամանատար։

1938 թվականին Մադաթյանը տեղափոխվում է Կիևյան ռազմական օկրուգ, որտեղից էլ ակտիվ մասնակցություն է ունենում Սովետական Բանակի կողմից Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդների ազատագրմանը։ Այստեղ էլ դերազանց

գործողությունների համար Մադաթյանը ստացավ կապիտանի կոչում և նշանակվեց վարժական վաշտի հրամանատար։

Այն հմտությունը, անձնուրացությունը, հերոսությունը, որ հանդես էր բերել նա ռազմաճակատում, տեղափոխեց իր հետագա աշխատանքի պրակտիկան, այդ փորձով դաստիարակելով վաշտի մարտիկներին։

Սովորել և սովորեցնել—ահա այն գործող ձգտումը, որ կազմում էր Մադաթյանի աշխատանքի ոճը։ Որպես վարժական վաշտի հրամանատար, Մադաթյանը իր մեջ մարմնացնում էր Սովետական Բանակի հրամանատարի լավագույն հատկությունները՝ պարտականությունը կատարել ժամանակին, անշեղ, լինել աղնիվ ու նվիրված, խստապահանջ ինչպես դեպի իր անձնականը, այնպես էլ վաշտի մարտիկ-կուրսանտները։ Միևնույն ժամանակ նա սիրելի ընկեր էր ամենքի համար։

Կուրսանտները Մադաթյանին անվանում էին «տակտիկայի վարպետ», իրոք նա վարպետությամբ էր սովորեցնում իր կուրսանտներին։ Դրանով էր բացատրվում այն, որ նրա վաշտը աչքի էր ընկնում դիվիզիայում ուսուցման գործի գերազանց դրվածքով և արդյունքներով։ Խաղաղ պայմաններում Մադաթյանի վարժական վաշտում օրինակելի դրված գործը օգնեց նրան բարձր հմտություն ցուցաբերելու նաև պատերազմի պայմաններում։

Մինչև Հայրենական Մեծ պատերազմը ռազմական գործի մեջ նրա ունեցած բացառիկ առաջադիմությունը վկայում էր Մադաթյանի պոտենցյալ կարողությունների մասին, որոնց զարգացման ու դրսևորման համար Սովետական Հզոր Բանակն ընձեռում է անսահման հնարավորություններ։

Մեր երկրի արևմուտքում սև ամպեր էին կուտակվում։ Հիտլերյան նվաճողները ուխտադրուժ պատերազմ

էին նախապատրաստում մեր Հայրենիքի դեմ։ Ֆաշիստական հորդաները խախտեցին խաղաղությունը նաև մեզ հետ։ Նրանք դաղանային մոլեգնությամբ հարձակում սկսեցին մեր խաղաղ ու ստեղծագործ երկրի վրա։

* * *

Ամառային դեղեցիկ դիշերներից մեկն էր՝ հունիսի 22-ի դիշերը։

Քաղաքը քնած էր խաղաղ քնով։ Հանկարծ, դիշերային լռության մեջ, պայթեց շարագուշակ մի որոտ։ Գործարանների շչակները միահամուռ աղդարարեցին վտանգը։ Լսվեց մոտոռների հռնդյունը, քաղաքի վրա բարձրացավ ահեղ մի դղրդոց, քաղաքի ծննդաբերական հիվանդանոցի առաստաղը ճարճատյունով ցած իջավ։ Դիշերային անդորրը փոխվեց դժոխքի։ Քրտինքի մեջ կորած, արցունքն աչքերին, մարդիկ երկար ժամանակ փլատակների տակից հանում էին անշնչացած մայրերի ու նորածին մանուկների դիակները։ Նրանց արյունոտված դեմքերը, ջարդված մարմինները Մաթևոսի նման դինվորների առաջ խնդիր էին դնում՝ հատուցել թշնամուն այդ անմեղ զոհերի համար, լուծել վրեժը...

Լուսադեմին գերմանացիներն անցան դրոհի՝ ձգտելով դրավել Պերեմիշլ քաղաքը։ Հակառակորդը մեր զորամասերի պաշտպանության առաջավոր եղրի վրա կենտրոնացրել էր իր կրակային ամբողջ ուժը։ Ահռելի դղրդյունով պայթում էին հրետանային արկերը։ Ոչ մի րոպե չէր դադարում ականանետային ու գնդացրային տեղատարափ կրակը։ Թշնամու նպատակն էր՝ ահաբեկել, թուլացնել մեր մարտիկների դիմադրությունը և նրանց վրա շարժել իր տանկային ու հետևակային զորասյուները։

Քաղաքի պաշտպանության առաջավոր եզրի մի հատվածում խնամքով խրամատավորված էին Մաթևոս Մադաթյանի միավորման մարտիկները։ Լեռնացած սանլությունը դեպի թշնամին մեր մարտիկներին դարձրել էր աներկյուղ, աննկուն, պատրաստ մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանելու հայրենի հողը. Սովետական պետությունը, մեր ժողովուրդների աղատությունը։

Նրանցից ամեն մեկը պատրաստ էր կատարելու այն մեծ գործը, որ հայրենիքը դրել էր նրանց վրա։ Միայն մի պահ դադարեց թշնամու մրրկային կրակը։ Հակառակորդը թափանցել էր քաղաքի մեջ, փողոցների աջ ու ձախ կողմերից թշնամին շարժեց իր տանկերը, մոտոհետևակը և հետևակային զորասյունները, որոնք նետվեցին Մադաթյանի զորամասի դիրքերի վրա։ Տեղատարափ կրակը բորբոքվեց նոր ուժով։ Մարտադաշտը ահեղ մի ժխոր դարձավ, մեր զորամասերը, մոտ թողնելով թշնամուն, նրա վրա թափեցին իրենց ամբողջ կրակային ուժը։ Ճակատամարտը հետզհետե սաստկանում էր։ Մեծաքանակ կորուստներ կրելով, թշնամին շարժվում էր առաջ։ Նա ձգտում էր խցկվել մեր պաշտպանության մեջ, բայց, հուժկու հակահարվածներ ստանալով, ետ էր կլորվում և նորից, նոր ուժերով դիմում դրոհի։

Ճակատամարտի այդ թեժ պահին, Մաթևոսը հրամանատարական մի կետից մյուսն էր անցնում և իր ստորաբաժանման հրամանատարներին ցուցումներ էր տալիս։ Նա նոր էր վերդարձել իր հրամանատարական կետը, երբ պայթյունի ճնշման ուժը խլացնում է նրան. մի պահ հետո մի հսկա հողակույտ թափվում է նրա գլխին, և նա ուշաթափ ընկնում է փոսի մեջ։ Երկրորդ արկի պայթյունը սթափեցնում է նրան։ Նա մի կերպ դուրս է սողում փոսից։ Գլուխը ծանր էր, աչքերը մթնում էին, մարմինը ցավում էր։ Սակայն նրա հայացքից չէր

վրիպում թշնամու ոչ մի խորամանկ քայլ։ Նրա խիզախ կամքը չէր ընկճվում։

Նա նկատեց, որ թշնամու կրակի տակ ընկած իր գնդացրային վաշտին սպառնում է գերմանական ավտոմատավորների մի ջոկատ, որը փորձում էր թևանցել վաշտին։ Տեղանքն այնպիսին էր, որ գնդացրորդները չէին նկատում Կլինսկ փողոցի շենքերի ետևից իրենց թևանցող ֆաշիստներին։ Դանդաղելը ոչնչացման կհասցներ գնդացրորդներին։ Պետք էր ամենաարագ և կտրուկ գործողության դիմել։ Մադաթյանը որոշեց անձամբ նախազգուշացնել իր մարտիկներին վտանգի մասին, կազմակերպել և գլխավորել մարտը։ Նա արծվի պես դեպի գնդացրային վաշտը սուրաց։ Գերմանացիները խփում էին ավտոմատներով ու ականանետներով։ Բայց նա առաջ էր անցնում։ Նա գնդացրային վաշտին հասավ այն պահին, երբ շենքի անկյունից թևանցող թշնամու ավտոմատավորները մոտ էին իրենց նպատակին։ Հասնելուն պես՝ գնդացիրներից մի քանիսը նա անմիջապես ուղղեց դեպի թշնամին, կրակ բացելով նրանց վրա։

Սովետական գնդացրորդները ոչնչացրին ու ցրեցին թշնամուն։ Մեկ ժամ տևող կատաղի մարտերից հետո թշնամին ստիպված եղավ նահանջել։ Այդ ճակատամարտում գնդացրի մոտ մահացու վերք ստացավ գնդի պարտեբյուրոյի քարտուղար մայոր Վասիլենկոն։ Տաք արյունը ծորում էր նրա մարմնից, բայց նա երկար ժամանակ գնդացիրը ձեռքից բաց չէր թողնում, նույնիսկ վերքը կապելու ժամանակ։ Պերեմիշլ քաղաքի և նրա բարձունքի վրա մղված մարտերում մայոր Մադաթյանի միավորման գնդացրորդները և հետևակը իրենց ձեռքում պահեցին իրենց դիրքերը։

Այդ ճակատամարտից հետո, իր համագյուղացիներին ուղղած նամակում Մադաթյանը պատմում է, որ

մեր մարտիկները անողոքաբար ոչնչացնում էին ֆաշիստական ճիվաղներին։ Պերեմիշլ քաղաքի համար մղված մարտերում ոչնչացվել էր հակառակորդի տասնյակ տանկ, մեր խրամատների առջև զրոհից հետո մնացել էին 300-ի չափ սպանված ֆաշիստական զինվոր և սպա։

Սովետական մարտիկները իրենց մեջ առյուծի ուժ էին զգում՝ կռվելու ու ջախջախելու նենգ թշնամուն։

Պատասխան նամակում Մադաթյանի համագյուղացի աշուղ Ներսեսը հետևյալ տողերն է նվիրել իր հայրենակցին։

Շամփրում ես նենգ թշնամուն ահեղ զարկով մահացու,
Մահվան դիմաց մահ ես հորդում, նեռ, չարանենգ թշնամուն
Եվ արյան դեմ, արյուն թափում...
Դու ժառանգն ես արժանավոր նախնիների մեր հայոց,
Մեր Կովկասյան լեռնաշխարհի հերոսներից,
Չես սասանում բյուր արկերի ու ռումբերի որոտից.

* * * * * * * * * *

Զարկ թշնամուն կտրուկ թրով, խոցիր սիրտը ավինով...»

Ակտիվ պաշտպանողական մարտեր մղելով թշնամու դեմ, Մադաթյանի ստորաբաժանումը մյուս զորամասերի հետ միասին նահանջում էր մայր Ուկրաինայի տափաստաններով։ Նահանջող զինվորները և հրամանատարները տեսնում էին կանանց ու երեխաների տխուր դեմքերը, նրանց արտասվալի աչքերը. ճմլվում էր նրանց սիրտը։

Ռազմաճակատի գիծն անցնում էր Լվովի մարզի Սամբոր քաղաքի շրջակայքով, ֆաշիստական հեռաձիգ հրետանին ռմբակոծություն էր ենթարկում քաղաքի կենտրոնական մասը։ Գերմանացիները օրվա մեջ 2—3 զրոհ էին ձեռնարկում, բայց, զարնվելով քաղաքի պաշտպանների հերոսական դիմադրությանը, ետ էին շպրտվում։ Դաժան ու արյունահեղ մարտերը չէին դադարում

առանձնապես այն զորամասի պաշտպանության հատվածում, որի կազմի մեջ էր գտնվում Մադաթյանի ստորաբաժանումը։ Այդ հատվածում մի դիշեր գերմանացիները կատաղի գրոհ ձեռնարկեցին։ Դեռ լույսը չէր բացվել, երբ թշնամու մարտկոցները Մադաթյանի ստորաբաժանման դիրքերի վրա տեղատարափ կրակ բացարին։ Հետո գրոհի նետվեց հետեւակը։ Գերմանացիները թվական գերակշռություն ունեին։ Նրանք հարձակվում էին մի քանի զորասյուներով։

Մադաթյանի գնդի գնդացրորդները հուժկու կրակով հնձեցին հարձակվող գերմանացիների առաջին շարքերը։ Նրանց հետեւի շղթաների մեջ խփեց մեր հրետանին։ Հակառակորդի շարքերը ցիր ու ցան եղան։ Բայց հարձակումը չէր թուլանում։ Գերմանացիները սկսեցին ակտանետներով գնդակոծել պաշտպանվող բարձունքը։ Միաժամանակ, ֆաշիստներն առաջ նետեցին իրենց տանկերը։ Մադաթյանը հրամայեց տանկերն առաջ թողնել և թեւերից հարվածել տանկերի հետեւից հարձակվող ավտոմատավորներին, նրանց կտրել մեքենաներից։ Այդպես էլ արվեց։ Գնդացրային ուժեղ կրակը տանկերից կտրեց հակառակորդի ավտոմատավորներին։ Թշնամու տանկերին առջևից խփում էին հակատանկային հրանոթները, մարտիկները նրանց վրա նետում էին նռնակներ և հրկիզվող շշեր։ Մեքենաներից հինգը բռնավառվեցին, մնացածները ետ դարձած հետ նահանջեցին։ Ջնջած դրան, անթիվ զոհեր տալով, գերմանական հետեւակն առաջ էր խցկվում։

Մադաթյանը կանգնեց իր ամբողջ հասակով ու խրոխտ ձայնով բացականչեց՝ «Առա՛ջ, ընկերնե՛ր, գրոհի, հանուն Հայրենիքի»։ Եվ ավտոմատը ձեռքին նետվեց թշնամուն ընդառաջ։ Կարմիր բանակայինները, խրամատներից դուրս թռչելով, սվինները առաջ պարզած, մխրճվեցին գերմանացիների շարքերի մեջ, սկսվեց կա-

տաղի սվինամարտ։ Գերմանացիների շարքերը նոսրացան։ Հակառակորդի դրոհը ջախջախվեց, ռազմադաշտը ծածկվեց թշնամու զինվորների դիակներով։ Հերոսի մահով ընկան նաև սովետական շատ մարտիկներ։ Այդ մարտում գնդի հրամանատար Մաթևոս Մադաթյանը վիրավորվեց թևից։ Երբ սանիտարները փորձեցին նրան տանել թիկունք, նա հրաժարվեց։ Ցավից ատամները սեղմելով, նա բարձրացրեց իր արյունոտ ձեռքը ու վազեց վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Դորինի մոտ, որը մահացու վերք էր ստացել։ Մաթևոսը զրկելով իր ընկերոջ գլուխը, սեղմեց կրծքին, փորձեց ստուգել զարկերակը, բայց խիզախի սիրտը արդեն դադարել էր բաբախելուց։ Գնդի հրամանատարը զգուշությամբ ցած դրեց վաշտի հրամանատարի գլուխը և ծունկ չոքեց։ Մաթևոսի աչքերը լիքն էին արտասուքով, իսկ սիրտը՝ վրեժի անսահման ցասումով։

* * *

1941 թվականի դեկտեմբեր ամիսն էր. հարավարևմտյան ռազմաճակատում ձյունախառն քամին կատաղի ոռնոցով թափառում էր ուկրաինական լայնածավալ տափաստաններում։ Քամին, տարուբերելով գետափի ուռենիները, նրանց ճյուղերից ցած էր թափում ձյան սառած հատիկները։ Ուռենիների տակ, ձյունի վրա պառկած էր մայոր Մադաթյանը՝ իր մարտիկների հետ միասին։ Նրանց առջև տարածված էր սառած դետը, որի մյուս ափին սևին էին տալիս ուկրաինական Զալիմա կոչվող գյուղի այրված տները։

Չորս օրվա նախապատրաստությունից հետո մայոր Մադաթյանի զորամասն անցավ հարձակման։ Մադաթյանը, իր քաջերի գլուխն անցած, գիշերով անցավ սառույցի վրայով և, նեղ արահետով շրջանցելով հակառակորդին թիկունքից, շրջապատեց նրա գնդի շտաբը։

Թշնամու շտաբը հսկող պահակները, անաղմուկ, շատ արագությամբ ոչնչացվեցին։

Մայոր Մադաթյանը մոտեցավ շտաբի զբաղեցրած շենքի լուսամուտին և զգուշությամբ նայեց ներս։ Սեղանի շուրջը նստած ֆաշիստական սպաները զբաղված էին քարտեզը զննելով և գծագրելով։ Սենյակի անկյունում, սեղանի մոտ, մտախոհ նստած, ծխում էր մի շիկահեր զինվորական։ Նա ուշադիր հայացքով նայում էր ձեռքին բարձր պահած կարմիր ու կապույտ գծերով ներկված քարտեզին։

Մադաթյանը հարձակման նշան տվեց։

Դռներն ու լուսամուտները միաժամանակ բացվեցին։ Սովետական խիզախ մարտիկները, ավտոմատներն առաջ պարզած՝ ներս մտան և ոչնչացրին թշնամու շտաբի ամբողջ անձնակազմը։ Գերելով մի քանի զինվորների, վերցնելով փաստաթղթերը և դուրս գալով շենքից, Մադաթյանը հրամայեց սկսել հակառակորդի հիմնական ուժերի ոչնչացումը։ Գումարտակները ճակատից, իսկ Մադաթյանի գլխավորությամբ գործող խիզախները թիկունքից, սրընթաց հարձակումով հաղթահարելով գերմանացիների դիմադրությունը, լուսաբացին գյուղը մաքրեցին ֆաշիստներից։

Այս գործողությունների ղեկավարման ժամանակ ցուցաբերած խիզախության և անվեհերության համար ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը Մադաթյանին պարգևատրեց «Կարմիր Դրոշ» մարտական շքանշանով։ Միաժամանակ նրան շնորհվեց փոխգնդապետի զինվորական կոչում։

* * *

1942 թվականի ամառը Հայրենական պատերազմը թևակոխեց մի նոր, մեր երկրի համար ավելի ծանր շրջան։

377—2

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
29834
A 11/3978

Դաշնակիցները ձգձգում էին Եվրոպայում երկրորդ ռազմաճակատ բացելու վերաբերյալ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության հետ ունեցած իրենց դաշնակցային պարտավորությունների կատարումը։

Օգտվելով այն բանից, որ Եվրոպայում բացակայում էր երկրորդ ռազմաճակատը, գերմանացիները և նրանց դաշնակիցները արևելյան ռազմաճակատ են նետում իրենց բոլոր ազատ ռեզերվները և, կենտրոնացնելով հարավ-արևմտյան ուղղությամբ, ստեղծում են ուժերի մեծ գերակշռություն և հասնում տակտիկական զգալի հաջողության։

Ստալինգրադի ուղղությունում ֆաշիստական հրամանատարությունը հարձակման նետեց մոտ մեկ միլիոն զինվոր ու սպա, ավելի քան 1000 տանկ, մոտ երկու հազար ինքնաթիռ։

Թշնամու հարձակվող զորքերի կազմի մեջ մտնում էին 6-րդ և տանկային 4-րդ բանակները։ Ճակատի այդ մասում էին գործում նաև ֆաշիստական Գերմանիայի վասալների բանակները։ Հակառակորդի զորքերի ընդհանուր ուժերն այդ ուղղությունում կազմում էին մոտ 50 դիվիզիա։

Կռիվները ռազմաճակատի հարավ-արևմտյան ուղղությամբ օրըստօրե բորբոքվում և կատաղի բնույթ էին ընդունում։

Հիտլերյան հորդաները ձգտում էին թափանցել Դոնի ավազանը, Կուբանի հովիտը, հասնել Վոլգա գետին, խցկվել Կովկաս՝ Գրոզնու և Բաքվի նավթին տիրելու համար։

Թշնամու գլխավոր նպատակն էր երկրի հարավային շրջանը, արևելյան մարզերը կտրել կենտրոնից, արևելքից շրջանցել Մոսկվան, հարվածել նրան թիկունքից և

տիրել Սովետական Միության մայրաքաղաքին՝ մեր հարազատ Մոսկվային։

Մի քանի օրվա կատաղի մարտերից հետո, տեխնիկայի և մարդկային ուժի գերակշռության հետևանքով ֆաշիստներին հաջողվեց ճեղքել ռազմաճակատը Ստալինգրադից դեպի հյուսիս՝ Վոլգայի ուղղությամբ։ Սկսվեց քաղաքի անդադար գազանային ռմբակոծությունը։ Ֆաշիստները որոշել էին ավերել քաղաքը, ջախջախել Սովետական Բանակը և Ստալինգրադի պաշտպաններին նետել Վոլգայի ջրերը։

Քաղաքն այրվում էր։ Ֆաշիստական հարյուր հիսուն տանկ մոտոռազմված հետևազորի հետ միասին, հրետանու և ավիացիայի պաշտպանությամբ դուրս եկան տրակտորային գործարանի շրջանը։

Հիտլերականները հույս ունեին, որ տանկերի անսպասելի ճեղքումը կորոշի Ստալինգրադի ճակատագիրը։ Բայց նրանց ստրատեգիական և տակտիկական հաշիվները սխալ դուրս եկան։ Գերագույն Գլխավոր հրամանատարությունը խնդիր դրեց Սովետական Բանակի առջև՝ կանգնեցնել թշնամու առաջշարժումը, պաշտպանել սովետական հողի ամեն մի թիզը, այլևս չնահանջել ոչ մի քայլ։ «Նահանջը հավասար է մահվան,— ասվում էր հրամանում,—ով նահանջում է, զորամասի մարտական դրոշը ծածկում է հավիտյան ամոթով, հանցագործություն է կատարում հայրենիքի առաջ, որը երբեք չի ներվի սովետական ժողովրդի կողմից»[1]։

Հայրենիքի վրա կախված վտանգի մեծության գիտակցումը սովետական ամեն մի զինվորի կողմից՝ նրանց մեջ առաջացրել էր չտեսնված տոկունություն, նրանց մղում էր դեպի անձնազոհ գոտեմարտ։

Ստալինգրադի պաշտպանությունը ճակատագրական նշանակություն ուներ մեր ամբողջ սովետական

---

[1] «Կրասնայա Զվեզդա», ապրիլի 6, 1947 թ.։

ռազմաճակատի համար։ Ուստի Գերագույն Գլխավոր հրամանատարությունը պարտավորեցնում էր՝ չխնայել ուժ ու եռանդ Ստալինգրադը պաշտպանելու ու թշնամուն ջախջախելու համար։

Նկ. 1. Ստալինգրադի պաշտպանությունը

Սովետական զորքերի դիմադրությունը գնալով ավելի էր ուժեղանում։ Ստալինգրադի պաշտպանները ճակատամարտի թեժ օրերին պատմական նամակով դիմեցին պաշտպանության կոմիտեին, որտեղ նրանք գրում էին. «Մեր մարտական դրոշների առջև, ամբողջ սովետական երկրի առջև մենք երդվում ենք, որ չենք արատավորի ռուսական զենքի փառքը, կկռվենք մինչև վերջին հնարավորությունը։ Մեր հայրերը հաղթեցին Ցարիցինյան ճակատամարտում... մենք ևս կհաղթենք Ստալինգրադի տակ մղվող մեծ ճակատամարտում»[2]։

---

[1] «Ստալինգրադյան պրավդա», փետրվարի 2, 1943։

Ստալինգրադի քաջարի պաշտպանների թվումն էր նաև Մ. Մադաթյանի հրամանատարությամբ գործող զորամասը։

Սովետական մարտիկները պաշտպանական համառ մարտերում հյուծում էին հարձակվող ֆաշիստների գերակշռող ուժերը, ջախջախում նրա տեխնիկան։

Հակառակորդը, կանգ չառնելով հսկայական զոհերի առջև, ձգտում էր գավթել Ստալինգրադը։ Հիտլերյան հրամանատարությունը, մարտի մեջ մտցնելով հարյուրավոր տանկեր, ինքնաթիռներ և մարդկային նորանոր ուժեր, փորձում էր ընկճել Սովետական Բանակի հերոսական դիմադրությունը, դուրս գալ Վոլգայի ափը, հարավից և հյուսիսից թևանցել Ստալինգրադը, դրավել այն։

Ստալինգրադը դառնում է անառիկ բերդ։ Կազմակերպվում է Ստալինգրադի պաշտպանության քաղաքային կոմիտե, որը մոբիլիզացնում է քաղաքի բնակչությանը։

Ստալինգրադցիները պատրաստեցին 1170 կիլոմետր հակատանկային փոսեր, 85000 հրաձգային խրամատ, 2850 կիլոմետր պաշտպանական բնագիծ։ Ամեն օր 150—180 հազար մարդ աշխատում էին այդ կառուցումների վրա։

Բանակի զորամասերի հետ միասին հազարավոր ստալինգրադցիներ դիմեցին զենքի։

Տրակտորային գործարանում կազմակերպվեց կործանիչ գումարտակ։ Գործարանը քաղաքի պաշտպաններին հանձնեց 200 տանկ, 150 քարշիչներ։ Տանկերի վրա նստեցին այն մարդիկ, ովքեր կառուցել էին դրանք։

Աշխարհազոր գնացին գործարանի բոլոր բանվորները։ Բանվորների ջոկատները, ինչպես նաև կայազորի զորքերը համառորեն պաշտպանում էին անմահ փառքի քաղաքի յուրաքանչյուր մետր տերիտորիան։

Ստալինգրադը կանգնեց կենաց և մահու պայքարի։ Գերմանաֆաշիստական զորքերի հարձակումը վերջնականապես ձախողվեց։

Ստալինգրադի պաշտպանության համար մղված ճակատամարտում Սովետական Բանակը ցույց տվեց ռազմական արվեստի, թշնամուն ջախջախելու հմտության անդերազանցելի օրինակներ։ Մեր մարտիկների անօրինակ մասսայական հերոսությունն ու կայունությունը, արիությունն ու խիզախությունը, նրանց ռազմական բարձր հմտությունը հիացմունք էին պատճառում ամբողջ աշխարհի ժողովուրդներին։

* * *

Օգտվելով ուժերի ղգալի գերակշռությունից, գերմանացիները ձգտում էին հաճախակի հարվածների միջոցով մեր զորամասերի ճակատը մասնատել առանձին խմբերի, կտրել նրանց միմյանցից և նետել Վոլգան։ Այդ պլանի համաձայն հակառակորդն առաջին հարվածն ուղղեց այն դիվիզիայի դեմ, որի կազմում գործում էր նաև Մադաթյանի գունդը։

Սեպտեմբերի 21-ի երեկոյան գերմանացիները տրակտորային գործարանի շրջանում կենտրոնացրին հետևակի ու հրետանու մեծ ուժեր և այդտեղից հրետանային ու ականանետային կրակ բաց արեցին դետանցների վրա։ Այդ նույն կետից էլ թշնամու ավտոմատավորները փորձեցին ճեղքել-անցնել Ցարիցա գետի ձախ ափը և դեպի Վոլգայի անցարանները։ Գրոհը եղ մղվեց թշնամու համար մեծ կորուստներով։ Բայց և այնպես գերմանական ավտոմատավորների միավորումներից մի քանիսին հաջողվեց թափանցել կենտրոնական նավամատույցի շրջանը։ Նրանք դարան էին մտել տներում և կրակի տակ էին առել դետանցը։ Հարավային հարևան

զորամասի հետ կապը խզվեց, և դետանցի աշխատանքներն ընդհատվեցին։

Մեր գվարդիականները մարտի բռնվեցին թշնամու ավտոմատավորների հետ, սկսեցին տները մաքրել նրանցից, բայց մյուս օրը գերմանացիները այդ նույն տեղում նորից գրոհի անցան հետևակային մոտ երկու գնդի ուժով, մեծ քանակությամբ տանկերի օժանդակությամբ։ Օրվա առաջին կեսին գերմանացիները չկարողացան առաջ շարժվել, բայց օրվա երկրորդ կեսին՝ ավիացիայի, տանկերի ու հետևակի միասնական հարվածով, հակառակորդին հաջողվեց նեղել մեր զորամասերին և Տամբովյան փողոցով կենտրոնական դետանցի մոտ առաջավոր ջոկատներով դուրս գալ Վոլգայի ափը։

Այդ նույն ժամանակ հակառակորդի հետևակային գունդը, որը հարձակվում էր Կիևյան և հարակից փողոցներով, տանկերով դուրս եկավ մասնագետների տան շրջանը։ Գերմանացիները այստեղ ևս փորձում էին ճեղքել՝ դուրս գալ Վոլգայի ափը։ Բացի դրանից նրանք ուժեղ գրոհում էին նաև Ցարիցա գետի հունով, որտեղ նույնպես գործում էր մոտ մեկ հետևակային գունդ։

Մարտերի կատաղի լինելու մասին կարելի է դատել նրանից, որ միայն մեր գվարդիականները սեպտեմբերի 23-ին մի օրվա ընթացքում ետ մղեցին հակառակորդի 13 գրոհ, ոչնչացնելով 35 տանկ։

Փողոցային այդ ծանր մարտերի օրերին՝ 1918 թ. Ցարիցինի պաշտպանության մասնակիցները մի նամակով դիմեցին Ստալինգրադի պաշտպաններին։

«Մեր սիրելի քաղաքը մի հանձնեք թշնամուն,— գրում էին նրանք,— ամեն գնով պաշտպանեցեք Ստալինգրադը։ Կռվեցեք այնպես, որպեսզի ձեր, ինչպես և Ցարիցինի պաշտպանների համբավը սպրի դարեր շարունակ»։

Այդ նամակը ջերմ արձագանք գտավ բանակի բոլոր զորամասերում ու ստորաբաժանումներում։

Սովետական Միության հերոս, գեներալ-մայոր Ռոդիմցևի գվարդիականները, դիմելով Ստալինգրադի ռազմաճակատի բոլոր զինվորներին ու սպաներին, գրում էին. «Մենք ստացանք քաղաքացիական կռիվների փառապանծ վետերանների, Ցարիցինի հերոսական պաշտպանության մասնակիցների դիմումն ուղղված Ստալինգրադի պաշտպաններին։ Մենք հուզմունքով ու սրտի թրթիռով լսեցինք ալեհեր մարտիկների կոչը։ Մեզանից յուրաքանչյուրն այդ պահին մտածում էր մի բանի մասին՝ մեզանից և մեզանից է կախված Ստալինգրադի համար մղվող պայքարի ելքը։ Մեզանից յուրաքանչյուրը կրկին ու կրկին համակվեց այն գիտակցությամբ, թե որքան մեծ է այն պատասխանատվությունը, որ դրել են մեզ վրա ժողովուրդը, երկիրը»։

Գեներալ-մայոր Ռոդիմցևի գվարդիականների օրինակին հետևեցին նաև գվարդիական տանկիստները։

«Մարտական կոչով մեզ են դիմել մեր հայրերը՝ Ցարիցինի հերոսները,— գրում էին նրանք՝ Ստալինգրադի ճակատի բոլոր տանկիստներին ուղղած իրենց դիմումի մեջ,— հույսով մեզ են նայում սովետական ժողովուրդը, Ռուսաստանը, ամբողջ աշխարհը։ Երդվում ենք կրկնել Ցարիցինի պաշտպանների սխրագործությունները՝ Ստալինգրադի պատերի մոտ, ռուսական հողի վրա հիտլերյան արշավանքի վերջնական ջախջախման սկիզբը դնել»։

Իրենց պատասխան նամակներում նույն այդ մասին էին գրում Մագաթյանի գվարդիականները, օդաչուներն ու հրետանավորները։ Բոլորին միավորում էր մի զգացումնք, մի ցանկություն, մի միտք՝ ամեն գնով պաշտպանել Ստալինգրադը, բաղմապատկել Ցարիցինի հերոսական փառքը։

1942 թ. հոկտեմբերին մարտերն ավելի ուժեղացան։ Դղջոտերը, բլինդաժները քար ու քանդ էին լինում։ Օդում կատաղաբար ոռնում էին ռմբակոծիչները։ Գետինը դողում էր թափվող տասնյակ հազարավոր ռումբերից։ Հանկարծ տեղամասը բոցավառվեց։ Ջրի փոխարեն բենզինի, նավթի բոցերը շտեմարաններից սկսեցին հոսել դեպի մեր խրամատները և հրամանատարական կետերը։ Տոթ, հեղձուցիչ հոտ և կրակ։ Բայց կռիվը շարունակվում էր։ Վիրավորները խրամատներից չէին հեռանում։ Ռումբերից ու ականներից վնասված, պատառոտված, խանձված մարդկանց սանիտարները դուրս էին բերում Վոլգայի ափը։ Այդ թեժ մարտերի մեջ էր Մադաթյանի զորամասը։ Այստեղ առանձին փայլով դրսևորեց նա իր հրամանատարական ընդունակությունը։ Նա շարունակ անցնում էր մի ստորաբաժանումից մյուսը, ոգևորում էր մարտիկներին, հմտորեն ղեկավարում էր կատաղի մարտը։

Մադաթյանի դեմքը սևացել էր ծխից ու մրից։

Հրաձգային գումարտակի հրամանատարները զեկուցեցին Մադաթյանին, որ թշնամին գերազանցում է թվով, որ իրենք, համարյա, օղակի մեջ են և երկուսն էլ վիրավոր, բայց և այնպես քանի դեռ կենդանի են՝ ոչ մի ֆաշիստ չի անցնի։ Ստալինգրադցիները չեն նահանջում։ Մարտիկներն ամուր պատնեշի պես կանգնած են նրա պաշտպանության համար։

Հաղթանակի հեռանկարն անօրինակ ոգևորություն էր ներշնչել նրանց։ Անվեհեր խմբերի հակագրոհողներին օգնության հասավ ստորերկրյա ականային գրոհը։ Սակրավորները մտնում էին հարձակվող խմբի մեջ հրաձիգների հետ միասին։ Ստորերկրյա ականային առաջին գրոհը գործեցին 62-րդ բանակի սակրավորները՝ Վլադիմիր Դուրովի և Իվան Մակարովի ջոկատները։ Նրանց հարվածն ուղղված էր ֆաշիստների մի խոշոր

հենակետի դեմ։ Հարձակման սրահն ուներ հինգ մետր խորություն և 43 մետր երկարություն։

Սակրավորներն անցնում էին գետնի տակով անաղմուկ և անտեսանելի։ Տասն և չորս օր ստորերկրյա սրահում առկայծում էին ձեթի ճրագները։ Այդ խորշում ապրողները մոռացել էին ցերեկվա լույսը, կորցրել ոտքի վրա կանգնելու ընդունակությունը։ Նրանց պակասում էր օդը, դունատվել էին, փոխվել էր նրանց դեմքի արտահայտությունը։

Նկ. 2. Ականանեսը (կատյուշաների) հակահարձակման ժամանակ

Սարատովի պայթյուն լսվեց Վոլգայի ափին։ Թշնամու վրա իջնում էր հարված հարվածի հետևից։ Երբ փլվեց յոթ հարկանի տան հինգ հարկը, որի ներսում կռվում էին մեր զինվորները, կիրդիզ Ուրազալիևը նայեց առաստաղին և փիլիսոփայորեն նկատեց.

— Քաղաքը հոգնել է, տները հոգնել են... քարերը հոգնել են. մենք չհոգնեցինք։

Հիտլերականները առաջին շարքերում դասավորել էին հունգարական և ռումինական զորքեր և նրանց պիակների վրայով առաջ էին սողում։

Կռվի ամենաթեժ պահին, երբ վճռվում էր ճակատամարտի բախտը, գործի անցան կատյուշաները։ Նրանք պատասխանում էին գերմանական վեց փողանի ականանետներին։

Երկինքն ու երկիրը դղրդում էին։ Ամբողջ ռազմադաշտը հրդեհի մեջ էր, վառվում էին թփերը, ծառերը։ Մխի թանձր ամպերով ծածկված էր ամբողջ շրջապատը։

Հարձակման նախօրյակին հակառակորդի ավիացիան երեք օր շարունակ ռմբակոծում էր «Հոկտեմբեր» գործարանը։ Պատահում էր, որ մի օրվա ընթացքում 62-րդ բանակի զորամասերը կրում էին 1800—2000 ինքնաթիռի գրոհ։ Ռմբակոծությունների ընդմիջումներին գործում էին հրետանին և ականանետները։ Չնայած այդպիսի գերազանց նախապատրաստություններին, թշնամու հետևակը հարձակման ընթացքում հաջողություն չէր ունենում։ Նման դեպքում գերմանացիները հետ էին քաշում հետևակը և շարունակում էին ռմբակոծությունը։

Հոկտեմբերի 3-ին մեր զորքերը հետ մղեցին հակառակորդի բոլոր հարձակումները «Կարմիր հոկտեմբեր» գործարանի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող թաղամասի շրջանում։ Թաղամասը, երեք անգամ ձեռքից-ձեռք անցնելուց հետո, վերջիվերջո մնաց մեր ձեռքում։ Ավելի քան սոսկալի էին փողոցներում մղվող մարտերը։ Երբ ֆաշիստները մոտենում էին թաղամասի փողոցներից մեկն ու մեկին, կամ դրանք պաշտպանող փոխ-գնդապետ Մաղաթյանի ստորաբաժանումների առաջին բնագծին, անմիջապես մարտի մեջ էին մտնում

հակատանկային հրացաններով և նռնակներով զինված մարտիկները։ Շենքերի կտուրներից և լուսամուտներից նռնակներ և հրկիզվող հեղուկով լի շշերը թափվում էին թշնամու վրա։ Մեր քաջարի զինվորները հոկտեմբերի 4-ի լուսաբացին արդեն ոչնչացրել էին հակառակորդի 30 տանկ, չնահանջելով և ոչ մի քայլ։

Այդ մարտում իր քաջությամբ աչքի ընկավ հակատանկային հրանոթի հրամանատար Հարությունյանը։ Նրա հրանոթի ուղղությամբ սողում էր հակառակորդի տանկային շարասյան առաջին տանկը։ Հարությունյանը հրամայեց 100 մետր հեռավորության վրա միայն կրակել։ Երբ տանկը հասավ նշանակված տեղը, նա գոչեց՝ «կրա՛կ»։ Զրահապատ հրեշը կանգ առավ և նրա ետևից հարձակվող տանկերի ճանապարհը փակեց։ Օգտագործելով հարմար րոպեն, Հարությունյանը կայծակի արագությամբ կրակ բացեց հակառակորդի տանկային շարասյան վրա և խուճապի մատնեց նրանց։

Մինչ թշնամին ցանկանում էր ելք գտնել, Հարությունյանը, 16 հրկիզվող արկ բաց թողնելով, լուսավորեց ֆաշիստական չորս տանկ։ Հակառակորդի մնացած տանկիստները գաղափարելով արագացրին իրենց ընթացքը։ Նրանցից մեկը հարձակվեց Հարությունյանի հրանոթի վրա։ Տանկի առջևից հնարավոր չէր ազատել հրանոթը։ Հարությունյանը իրեն չկորցրեց, հրամայեց զինվորներին թողնել հրանոթը և պատրաստել նռնակները։ Տանկը տրորեց հրանոթը, բայց այդ րոպեին երեք կապոց նռնակները նետվեցին։ Թշնամու տանկն անշարժացավ։ Նռնակներին հաջորդեցին հրկիզվող հեղուկով լիքը շշերը։ Բոցավառված տանկը պայթեց, և նրա բեկորների հետ միասին հօդս ցնդեց անձնակազմը։ Ֆաշիստական մյուս տանկերը, հանդիպելով մեր զինվորների ուժեղ կրակին, ետ դարձան, շտապելով արագությամբ անցնել տեղացող կրակների միջից, բայց ընկան Հարու-

թյունյանի և նրա զինվորների ուժեղ կրակի տակ։ Հարությունյանն անձամբ ոչնչացրեց տանկերից մեկը, բայց ինքն էլ վիրավորվեց նռնակի բեկորից։ Ուշադրություն չդարձնելով ստացած վերքին, նա բարձրացավ տանկի վրա, հրամայեց տանկիստներին դուրս գալ։ Թշնամու տանկիստները բացեցին դուռը և, նկատելով Հարությունյանի զայրացած արտահայտությունը, ներս քաշվեցին։ Նա որոշեց սպանել արյունարբու ֆաշիստներին, բայց հիշեց, որ իրենց անհրաժեշտ է կենդանի լեզու։ Հիտլերականները չցանկացան դուրս գալ տանկից։ Զայրացած Հարությունյանը մոռացավ ամեն ինչ և հրրկիզվող շղերը նետելով տանկի վրա, պայթեցրեց այն։

Հրամանատարությունը, ըստ արժանվույն գնահատելով Հարությունյանի քաջագործությունը, նրան պարգևատրեց «Կարմիր աստղ» շքանշանով։

* *
*

Մադաթյանի գնդի հետ փոխգործողության մեջ մտած զրահատանկային զորամասը խնդիր ստացավ հանկարծակի գրոհով ճեղքել ֆաշիստների պաշտպանության դիրքերը և դուրս գալ նրանց թիկունքը։ Լուսաբացին մեքենաները սրընթաց շարժվեցին առաջ։

Հետևակը, ոգևորված տանկիստների համարձակ գրոհով, հարձակվեց թշնամու վրա։ Գերմանացիք տեղատարափ կրակ բացին հրանոթներից, ականանետներից։

—Առա՛ջ, տանկիստնե՛ր,— լսվում էր Մադաթյանի որոտագին ձայնը իր հրամանատարական մեքենայի ռադիո-բարձրախոսից։ Այդ մարտում հերոս հրամանատարի տանկիստները, ճեղքելով հակառակորդի պաշտպանության դիծը, ճանապարհ բացին հետևակի համար, ոչնչացնելով գերմանական քսաներեք տանկ, երեք հրե-

տանային մարտկոց, մի շարք կրակակետեր և մեկ ֆաշիստական գումարտակ։ Այդ կռվում հիտլերականները երեք անգամ հարձակվեցին մեր դնդի վրա և ամեն անգամ, մեծ կորուստներ կրելով, նահանջեցին։

Այդ ժամանակ Ստալինգրադի ամբողջ ճակատով մեկ դղրդում էր՝ այժմ Սովետական Միության Հերոս՝ կործանիչ օդաչու Միխայել Բարանովի փառքը։ Օդում նկատելով «Մեսերշմիդտների» մի խումբ Բարանովը համարձակ կերպով մարտի բռնվեց նրանց հետ։ Հաշիվը արագ կերպով վերջացնելով գերմանական մեկ ինքնաթիռի հետ, նա միաժամանակ մարտի բռնվեց թշնամու երկու կործանիչների հետ։

Բայց այդ ժամանակ օդաչուն տեսավ գերմանական ռմբակոծիչների մի վեցյակ։ Նրանք ուղղություն էին վերցրել դեպի մեր առաջավոր գիծը։

Ճարպկորեն հեռանալով «Մեսերշմիդտներից», օդաչուն սկսեց հետապնդել «Յունկերսներին», գրոհեց նրանց վրա, վառեց մեկը, իսկ մյուսներին ստիպեց հետ վերադառնալ։

Եվ հանկարծ Բարանովը նկատեց, որ ոչ հեռու հինգ «Մեսերշմիդտներ» հետապնդում են յուրայիններից անջատված սովետական մեկ գրոհիչի։ Նա իսկույն շտապեց օգնության։ Կարճ տարածությունից վստահ կրակի մի համադարկ, և գերմանական հինգ ինքնաթիռներից մնացին չորսը։

Ապա Բարանովը ինքնաթիռն ուղղեց դեպի հակառակորդի մյուս կործանիչի ճակատը։ Ինքնաթիռները արագաց մոտենում էին իրար։ Բարանովը լարված սպասում էր։ «Չի դիմանա, հենց հիմա կթեքվի և փախուստ կտա», կրկնում էր նա, զսպելով իր ինքնաթիռը թեքելու բնազդական ցանկությունը։

Ֆաշիստը առաջինը թեքվեց։ Բարանովը նրա վրա արձակեց գնդացրային մի համադարկ։ Միևնույն ժա-

մանակ թեև չտեսավ, բայց զգաց իր հետևում երկրորդ թշնամուն։ Նույն վայրկյանին թիակին դիպած հարվածից գլուխը պատեց։ Եվ երբ քիչ հետո գիտակցության եկավ, տեսավ, թե ինչպես վառվելով հեռանում էր վիրավորված թշնամին։ Մնում էր մեկը։ «Մեկը մեկի դեմ՝» սա արդեն դատարկ բան է,— և Բարանովը ինքնաթիռը նետեց ցած, աղատվելու իրեն հետևող ֆաշիստից։

Գնդացրային համազարկը վերստին ցնցեց ինքնաթիռը։ Գնդակը պոկել էր ճակատի մաշկը, արյունը լցվում էր աչքերը և հնարավորություն չէր տալիս ղեկավարելու սավառնակը. վիրավորված էր նաև ձախ ձեռքը։ Ղեկը ներկված էր արյունով։ Սակայն մարտը դեռ վերջացած չէր։ Թշնամին կենդանի էր դեռ։ Բարանովը, գերբնական ուժ գործադրելով, հաղթահարեց ցավը, ինքնաթիռը բարձրացրեց վերև։ Վրեժի, հաղթության և ապրելու ծարավն այժմ նրան մղում էր կենաց ու մահու մենամարտի։ Երբ ֆաշիստական ինքնաթիռը վնասված ղեկով դլխապտույտ զարնվեց գետնին, Բարանովը ուշքի եկավ, նայեց շուրջը։ Երկնքի ընդարձակածավալ տարածության մեջ նա զգաց, որ մեն-մենակ է ինքը, վնասված ինքնաթիռով թշնամու կողմից գրավված հողամասի վրա՝ արյունաքամ, ցավից ու հոգնածությունից թուլացած, վառելանյութի չնչին պաշարով։ Նրա ոչնչացրած վերջին ինքնաթիռը վառվում էր ներքևում։ Անծայր երկնքի ամայի տարածության մեջ նրա հետ էր միայն իր «վիրավորված» հավատարիմ ինքնաթիռը, արյունաքամ հղող մարմինը և կամքը։ Ուրիշ ոչինչ։ Բայց ոչ այնքան հեռու՝ արևելքում գտնվող նույնպես վիրավոր, սակայն կամքով ուժեղ նրա հայրենիքը սպասում էր նրան, և ինչ գնով էլ լիներ, պետք էր ինքնաթիռը հասցնել մինչև այդտեղ։

Միայն նրա վիրավոր գլուխն ու թիկունքը չէ, որ ցավում էին. նա զգում էր այդ ցավն ամբողջ մարմնի մեջ,

ուր, կարծես, ոչ մի առողջ մաս չէր մնացել։ Աննկարագրելի ջանքեր էին հարկավոր ուղիղ նստած մնալու, աչքերը չդոցելու և ղեկը ձեռքին ամուր պահելու, ինքնաթիռը ղեկավարելու համար։

Նա մեքենան բարձրացրեց վերև։

Բայց շատ բարձրանալով, նա իրեն վատ զգաց, սիրտը սկսեց արագ կերպով բաբախել, ականջների խշշոցը սկսեց ուժեղանալ։ Մի պահ աչքերը փակելով, հենվեց նստարանի թիկունքին, բայց մեջքի այրող ուժեղ ցավը ստիպեց նրան սթափվել և կրծքով կոթնել ղեկին։

Հանկարծ ցնցվեց մեքենան. Բարանովը բացեց աչքերը. «Մեսերշմիդտը» անցավ առաջ։

Կռիվը շարունակվում էր, Բարանովի զինամթերքը վերջացել էր։ Նա վճռեց թշնամուն խոյահարել։ Հարմար մոմենտ ընտրելով, սովետական օդաչուն իր ինքնաթիռի հարթամասով կտրեց գերմանական մեքենայի պոչը։ Գերմանացին մեր աչքի առաջ խցանաձև պտույտ եկավ, պլոկվեց ցած ու թաղվեց հողի մեջ։ Բարանովը պատրաստվում էր 2-րդ խոյահարմանը, բայց նրա մեքենայի հարթամասից ընկել էր մի կտոր. օդի ճնշման տակ վնասված հարթությունը բացվեց, և ինքնաթիռը սկսեց պլոկվել։ Բարանովը պարաշուտով ցատկեց ցած։ Մադաթյանը բարձր հրամանատարությունից խնդրեց ավիացիայի օգնություն։

Լուսարացին օդը թնդաց օդանավերի աղմուկից։ Սովետական բաղեների մի երամ էր այդ։ Ռմբակոծիչներն առաջ էին շարժվում ջինջ երկնակամարում, նրանց շուրջը ճախրում էին վեց կործանիչ։

Աղմուկը հետզհետե ուժեղացավ։ Այժմ օդանավերը թռչում էին ավելի ցած։ Նրանք անցան Կաուլուբա կայարանից դեպի հարավ-արևելք՝ Բալկա-Գերասիմովա։ Այնտեղից էին անցնում երկու թշնամի բանակների պաշտպանության առաջին գծերը։

Ռմբակոծիչները սկսեցին ռումբեր տեղալ թշնամական ամրությունների, խրամատների վրա։

Շատ չանցած, օդ բարձրացան հակառակորդի «Մեսսերշմիդտներ», որոնք աշխատում էին վրեժ լուծել։ Սովետական 32 սավառնակներ, կործանիչների պաշտպանության տակ, առանց որևէ վտանգի ենթարկվելու վերադարձան։

Օդում կռվում էին մեր կործանիչները և ֆաշիստական ութ «Մեսսերշմիդտ»։ Դա օդային մի ահարկու մարտ էր, որ տեղի էր ունենում Դոնի անծայրածիր տափաստաններից վերև, կապույտ երկնքի անսահման տարածության մեջ։

Օդանավերը գնդացրային և հրանոթային կրակ էին տեղում իրար վրա։ Երբեմն նրանք հեռանում էին միմյանցից, բարձրանում ավելի վեր, նորից իջնում և կրակ թափում երկու կողմից։

Հանկարծ լսվեց ահռելի մի ձայն, ֆաշիստական «Մեսսերշմիդտներից» մեկը, ծխի և բոցի մեջ վժժալով, ընկավ Կատլուբա կայարանից ոչ հեռու։ Օդային կռիվը կատաղի բնույթ էր ստացել։ Այդ րոպեին մեր կործանիչներից մեկը բոցավառվելով ընկավ։ Ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնաղյանը նկատեց այդ և սկսեց հալածել մեր սավառնակը վայր գցող ֆաշիստին։ Օդանավերը խլացուցիչ աղմուկով դղրդացնում էին շրջակայքը։

«Մեսսերշմիդտներից» մեկը ևս աղմուկով ընկավ գետնին և փոխվեց ծխի ու բոցի դորշագույն սյունի։ Թշնամու մնացած օդանավերը փախուստի դիմեցին։ Սովետական բաղեները, առանց ժամանակ կորցնելու, սկսեցին հետապնդել փախչողներին։ Այդ վայրկյանին գնդացրային համազարկերից ընկան երկու «Մեսսերշմիդտ»։ Ընկած մեքենայից մեկի օդաչուն գերմանական փոխգնդապետ էր. նրա այրված կրծքի վրա կար երկաթի չորս խաչ։

Ֆաշիստական այդ ավազակի ինքնաթիռը խփել էր ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնազյանը։

Ավագ լեյտենանտ Բուռնազյանը համարձակ և անվեհեր օդաչու էր։ Գերազանցորեն տիրապետելով օդային մարտի տեխնիկային, բոլոր կռիվներին նախաձեռնությունը նա միշտ իր ձեռքն էր առնում։ Կռվի ժամանակ հաստատակամ էր և սառնարյուն։ Նա շատ անգամ էր մենամարտի բռնվել հակառակորդի հետ և ոչ հակառակորդի գերակշռությունը, ոչ էլ մահվան վտանգն օդային զարհուրելի մարտերում, երբեք չէին սարսափեցրել Բուռնազյանին։ Նա միշտ գործել էր համարձակ, համառորեն և միշտ հաղթող հանդիսացել։

Ստալինգրադի օդային կռիվներում կատարած սքիբագործությունների համար ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնազյանը պարգևատրվել է Կարմիր Դրոշի շքանշանով։ Ստալինգրադի մատույցներում 33 անգամ նա մասնակցել է օդային կռիվներին և անձամբ ոչնչացրել թշնամու տասը ինքնաթիռ։

Տեղանքի հետ ավելի մանրամասն ծանոթանալուց հետո, Մադաթյանը համոզվեց, որ քաղաքը պաշտպանելու համար ուրիշ ավելի հարմար բնագիծ չկար. ուստի ԵՊՇ 62-րդ բանակի հրամանատարը չէր ուզում առանց մարտի զիջել այս բազմաթիվ բլրակները, ապա պիտի ճակատամարտ տար հենց այս բլրակներում, քաղաքի եզերքի տներում։

Խրամատներն ու էսկարպները բոլորովին թարմ էին, որոշ հատվածներում նույնիսկ՝ կիսավարտ։ Եվ այդ հատվածներում դեռ երևում էին քաղաքի և շրջակա գյուղերի բնակիչները, որոնք շարունակում էին փորել խրամատներ, կառուցել ամրոցներ։

Սեպտեմբերի վերջերին ճակատամարտը Ստալինգրադում հասավ այնպիսի չափերի, որպիսին պատերազմների պատմությունը դեռ չէր իմացել։ Գերմանա-

կան հրամանատարությունն իր զորքերի համար նշանակեց Ստալինգրադը գրավելու մի նոր ժամկետ՝ հոկտեմբերի 14-ը։

Ֆաշիստները քաղաքին մոտեցրին ևս մի քանի դիվիզիա. ստեղծվել էր ուժեղ բռունցք, որը պետք է վճռեր Ստալինգրադի բախտը։ Ֆաշիստական սավառնակների թռիչքների քանակն այդ ժամանակ օրական հաղարից անցնում էր, իսկ հոկտեմբերի կեսերին հասավ 2000—3000-ի։ Շրջապատում ամեն ինչ այրվում էր, վառվում էր հողը, վառվում էին տները։ Դիվիզիաների շտաբներն այդ ժամանակ գտնվում էին առաջավոր գծից 50—60 մետր հեռավորության վրա։ Վառվող նավթը հասել էր բլինդաժներին։ Շնչել անհնարին էր, մարտիկները խեղդվում էին գազի հոտից։

Գերմանական հրամանատարությունն իր տանկային զորամասերն անընդհատ նետում էր մեր մարտիկների վրա։ Մեկ դրոհին հաջորդում էր մյուսը, ականների, արկերի ու ռումբերի պայթյուններից ցնցվում էր գետինը։ Տիրում էր անվերջ դղրդյուն, փոշու ու ծխի ամպերը ցերեկը գիշեր էին դարձրել։ Թվում էր, թե ամեն ինչ պիտի ոչնչանա կրակի այդ ծովում, գերմանացիների կողմից չընդհատվող ռմբակոծության մեջ։ Բլինդաժները ցնցվում էին այնպես, ասես գտնվում էին հզոր երկրաշարժի կենտրոնում։ Թվում էր, թե ամրացման ռելսերը և գերանները կռանում են որպես ճկուն զսպանակ, իսկ նրանց վրայի հողը թափվում էր մարդկանց գլխին։

Գերմանական հրամանատարությունը հիմնական հարվածը հասցնում էր Ստալինգրադի հյուսիսային մասին, ձգտելով, ամենից առաջ, կտրել մեր զորամասերի աջ թևը Մեչետկա գետի վրա և ոչնչացնել այն զորամասերը, որոնք գործում էին Մոկրի Մեչետկայից հյուսիս։

Կռահելով թշնամու մտադրությունները, հրամանատարությունը ժամանակին կատարեց իր զորամասերի վերախմբավորումը։ Մի այլ հատվածից լրացուցիչ միավորումներ տեղափոխեցին, ուժեղացնելով Ստալինգրադի տրակտորային գործարանի պաշտպանությունը։ Մարտերն այստեղ կատաղի բնույթ ստացան։

Գործարանի շրջանի վրա հակառակորդը հարձակվեց հրետանու և ավիացիայի ամբողջ ուժով։

Առավոտյան լույսը բացվելիս թշնամին մարտի մեջ մտցրեց նոր թարմ ուժեր, որոնց օժանդակում էին մեծ քանակությամբ տանկեր։ Երեկոյան դեմ նրանք ճեղքեցին, անցան դեպի գործարան։ Մարտերը շարունակվում էին անդադար։

Ի վերջո հակառակորդին, այնուամենայնիվ, հաջողվեց Ստալինգրադի տրակտորային գործարանի շրջանում ճեղքել մեր զորքերի ճակատը, գրավել գործարանը և հյուսիսային զորքերի խմբավորումը կտրել 62-րդ բանակի հիմնական մասից։

Սակայն հակառակորդն իր հարձակման հիմնական նպատակին չհասավ։ Նա կտրեց Ռինոկ և Սպարտակովեց ավանները, դուրս եկավ Վոլգայի մոտ, գրավեց Ստալինգրադի տրակտորային գործարանը, մասնատեց 62-րդ բանակի ռազմաճակատը, բայց չկարողացավ Ստալինգրադի ճակատամարտն ավարտել իր օգտին, չկարողացավ ոչնչացնել շրջապատման մեջ կռվող զորքերին։

Ֆաշիստական զորքերի կողմից Վոլգային սեղմված և երեք կողմից շրջապատված այդ խմբավորումը շարունակում էր հերոսաբար պաշտպանվել։ Հիտլերականները մոլեգնում էին, ձգտելով Վոլգայի մեջ նետել մեր զորամասերը։ Բայց ոչ թշնամու անընդհատ ռմբակոծումները, ոչ հրետանու և ականանետների կրակը, ոչ կատաղի

գրոհները չէին ընկճում մեր զինվորների համառությունը։

Գերմանական բանակի հրամանատարությունն ուղղակի երթից մարտի էր նետում նոր բերած զորամասերը։ Ստալինգրադի կենտրոնում այդ օրերին գործում էին գերմանացիների երեք տանկային և 7 հետևակային դիվիզիա։

Օգտվելով ուժերի զգալի գերակշռությունից գերմանացիները ձգտում էին հաճախակի հարվածների միջոցով մեր զորքերի ճակատը մասնատել առանձին մասերի, կտրել նրանց միմյանցից։ Այդ պլանի համաձայն ֆաշիստներն առաջին հարվածը հասցրին քաղաքի կենտրոնը պաշտպանող Սովետական Միության հերոս գվարդիայի գեներալ-մայոր Ռոդիմցևի զորքերին, նրանից հյուսիս-արևմուտք գտնվող Մադաթյանի միավորումներին։ Մադաթյանի մարտիկները մարտի բռնվեցին թշնամու ջոկատների հետ, սկսեցին նրանցից մաքրել տները, բայց մյուս օրը գերմանացիներն այդ նույն տեղում նորից գրոհի անցան հետևակային մոտ մեկ գնդի ուժով, մեծ քանակությամբ տանկերի օժանդակությամբ։ Օրվա առաջին կեսին գերմանացիները չկարողացան առաջ շարժվել։

Կեսօրվա մոտ կռիվը թեժացավ։ Գերմանացիների տանկերն աշխատում էին ճեղքել մեր պաշտպանության բնագիծը, երկինքն ու երկիրը շիկացել էին կրակից։ Մինչև իրենց արյան վերջին կաթիլը մարտիկները հերոսաբար պաշտպանում էին հայրենի քաղաքի ամեն մի թիզ հողը, ամեն մի տուն։

Սովետական տանկերը ճակատ առ ճակատ հարվածում էին գերմանական տանկերին։ Մեր տանկերն առաջ էին շարժվում և անողոքաբար ոչնչացնում էին հակառակորդին։

Մարտը տևեց մինչև կեսօր։ Ֆաշիստների հարձակումը ետ մղվեց։ Դաշտում մնացին տասնյակ պայթած տանկեր և մի քանի հարյուր սպանված և վիրավոր գերմանական զինվոր ու սպա։

Օրվա երկրորդ կեսին լուր տարածվեց, որ աջից հարևանները ճողոպրում են։ Հայտնի չէ, թե առաջինն ով տարածեց այդ լուրը, բայց այդ մասին այժմ արդեն բոլորը գիտեն։

Մարտիկների շարժումների մեջ ջղային տագնապ առաջացավ։ Եվ թեպետ մարմրող տան հետևում ականանետներն առաջվա նման շրխկում էին, բայց, նույնիսկ ականը փողի մեջ դնելիս, մարտիկը մի ականջով ուշադիր ունկնդրում էր, թե ինչ է կատարվում հարևանների մոտ։ Իսկ այնտեղ, վառվող տան հետևի ձորակում, ուր տեղավորվել էին գնդացիրները, անհանգիստ էր։ Գնդացրորդները շնչասպառ էին լինում։

Մադաթյանը կանգնած էր իր դիտակետում, որ փորել էին գնդի սակրավորները։ Նա ինքը հրամայեց մարտկոցի հրամանատարին կրակը ճշտել։

Մադաթյանը ականաձիգների կրակն ուղղեց բարձունքի աջ եզրը, ուր արդեն դեսանտներով սողում էին զրահատրանսպորտյորները։ Ականաձիգները կրակում էին վեցերորդ լիցքով, և զրահատրանսպորտյորին դիպչելը դժվար էր։ Բայց մի քանի ական ընկավ մեքենաների հետևում, այնտեղ, ուր դանդաղ շարժվում էին դեսանտավորները, և երբ ծուխը ցրվեց, Մադաթյանը տեսավ, թե ինչպես գերմանացիները խմբվել են մի տեղ, հավանաբար սպանվածների կամ վիրավորների շուրջը։

Աղմուկ բարձրացավ նաև ձախից, բոլորովին մոտ, որտեղ մինչև այդ հանդարտ էր։

Մադաթյանը հասկացավ, որ հարևանի շարքերում իրոք խուճապ է առաջացել. նշանակում է հակառանկա-

յին հրետանին տեղ չեն հասցրել, և մեր ստորաբաժանումը ծանր կացության մեջ է ընկել։

Մադաթյանը, որ կարծես չէր հետևում գնդի շտաբի պետ մայոր Ալիևին, անմիջապես նկատեց, ավելի ճիշտ զգաց, որ մայորն այլևս չկա շտաբայինների մեջ։ Նա, առանց հապաղելու, վճռական թռիչքով դուրս ցատկեց խրամատից և անմիջապես դեմ առավ իր շտաբի պետին։

Ալիևը մահվան պես գունատ, պառկած էր ցեխի մեջ տարածված, քարտեզը ձեռքին։ Աչքերը փակած նա թեթևակի տնքում էր, ինչպես քնի մեջ։ Մադաթյանը մի հայացքով որոշեց, որ Ալիևը վիրավորված է ճակատից, որովհետև նրա գլուխն ընկած էր ջրի հետ խառնված արյան լճակի մեջ։ Մադաթյանը պատկերացնել անգամ չէր կարող, թե կարելի է իր շտաբի պետին թողնել այդ ցեխի մեջ և նահանջել։

Տիտանական ձայնով Մադաթյանը կոչեց ամենից մոտիկ գտնվող հրամանատարին և, արտասվելով, շրջեց վիրավորի մոտ։

— Վերցրե՛ք։

Մարտիկները վերցրին մայորին՝ թևանցուկ։

Ալիևը հառաչեց։

Շուրջն ամեն ինչ թաղվում էր ճիչերի, հրաձգության, սարսափելի իրարանցման մեջ։

Գերմանացիները կարծես հանդարտվեցին։ Ջրահապտները, ինչպես հսկայական փղեր, քարացան հրդեհատեղերում։ Բայց նրանք չէին մոռացել իրենց դիմացի տները, որոնք լիքն էին Մադաթյանի զինվորներով։

Ամրանալով դրված տներում, Մադաթյանի գունդը համալրումների էր սպասում։ Մարտիկներն ուսումնասիրում էին թշնամուց խլված ավտոմատները, ականանետները և գնդացիրները։ Հետախույզները հեռու էին գնում, թափանցում էին հակառակորդի թիկունքը և ան-

հանգստացնում թշնամուն։ Սնայպերներն ամեն դիշեր առաջ էին շարժվում, դասավորվում էին հարմար տեղում և թաքուն դարաններից հակառակորդի սպաների ու զինվորների էին որսում։

Ստալինգրադի վրա բացվեց բոսորագույն լուսաբաղը։ Արևի առաջին ճառագայթների հետ միասին մի հեռու փողոցի ծայրում պայթեց մի քանի արկ։ Գնալով մոտենում էր մոտորների հռնդյունը։ Տաս ֆաշիստական տանկ առաջացան փողոցով։

— Հե՛տ շպրտել,— դաշտային հեռախոսի լսափողի միջով հրամայեց Մադաթյանը։ Եվ ավագ սերժանտ Զիմցովը բացում է հրետանային կրակ։ Լսվում է կրակոց։ Առաջին տանկը կանգ առավ։ Մյուսները մտան շենքերը։

Բոլոր հրանոթներն սկսեցին կրակել հակառակորդի վրա։ Թեժ մարտը բորբոքվեց։ Մադաթյանի ուղեղում մեխված էր միայն մի միտք՝ հաղթել անառակ թշնամուն։ Նա շտապ դուրս եկավ ամայի փողոցով, որտեղ աջ ու ձախ պայթում էին արկերը, ականները, մահաբեր գընդակներ էին սուլում։ Փողոցում դիմացի ավերված շենքի մոտ նա նկատեց թշնամու մեկ տանկ, դոտուց հանելով հակատանկային նռնակը գցեց տանկի տակ, տանկն անշարժացավ։ Խլացուցիչ ձայնով պայթում էին ականները, անընդհատ կրակում էին գնդացիրները, խեղդվելու աստիճան ոռնում էին ավտոմատները, բայց մարտիկներն առաջ էին շարժվում։ Հենց այն պատճառով, որ նրանք իրենց կողքին զգում էին իրենց սիրելի հրամանատարին, տեսնում էին նրա հանգիստ դեմքը, ոգևորիչ ժպիտը, քայլ առ քայլ նրանք հետ էին վերցնում Ստալինգրադի տները։

Մանր ճակատամարտում ոտքից վիրավորվեց հրամանատար Մադաթյանը, նրան ստիպելով տարան Վոլգայի ձախ կողմը։

Նա թիկնոց վրանով ծածկված նստած էր ցուրտ անձրևի տակ և կապտած բերանով սպասում էր տեղափոխման։ Երկու մեքենա եկան կանգնեցին նրանց դիմաց. նրանցից մեկի մեջ նստելու էին Կաղակովը, Գոբարիձեն, Մամեդովը և ուրիշները, իսկ մյուս ավտոմեքենայի մեջ նստելու էին Մադաթյանը, Գասպարյանը, Հասանովը, Կուզմինը, ծանր վիրավորված Վլասովը։

Բժիշկ Օգանովը գլխաբաց կանգնել էր դետնափոր տնակի առջև և հետևում էր վիրավորների տեղափոխմանը։

— Դե՛, բարի ճանապարհ Ձեզ, շարժվեցեք։

Արևը դեռ նոր սկսեց գլուխը հանել արևելքը ծածկող սպիտակ թանձր ամպերի միջից. պայծառ լույսը տարածվեց ամբողջ շրջակայքում։ Գեղատեսիլ է ամենուրեք. ինքս ուրախ եմ, հոգիս միանգամայն խաղաղ է. կծղած արտերի և ցողատարած կանաչ դաշտերի միջով ձգվել է ոլորապտույտ ընդարձակ ճանապարհը։ Տեղտեղ ճանապարհի վրա պատահում են մանրատերև փոքրիկ կեչիներ, որոնց անշարժ երկայնաձիգ ստվերները տարածվել են չորացած անվահետքերի ճանապարհին բուսած կանաչ մանր խոտերի վրա։

Այդ Սարատով տանող գեղեցիկ ճանապարհն է, և մենք ահա հասանք Սարատով քաղաքը, ուր պիտի պառկենք բուժվելու։

Մեքենան ներս մտավ հոսպիտալի բակը, երեք կողմից մոտ են վազում սանիտարները, բժիշկները և հաճոյախոսություններով ուզում են վիրավորներին դրավել։ Հոսպիտալի աշխատակիցների մեջ կանգնած էր միջին հասակի մի կին։

Նա ուշի-ուշով հետևում էր Մադաթյանին, որն այդ ժամանակ իջնում էր ավտոմեքենայից։ Մադաթյանը նայեց նրան և հանկարծ շփոթվեց։

Իսկ գեղեցիկ կինն այնպես ագահ հետաքրքրությամբ էր նայում, կարծես ցանկանում էր կլանել նրան։

— Մաթևո՛ս,— ճչում է Արաքսյան[1]. առաջ վազելով,— Մաթևոս.....

Փոխգնդապետ Մ. Մաղաթյանը հիվանդանոցում

Մաթևոսը մնում է տեղում, չկարողանալով ոչ մի բայլ անել։ Արաքսյայի աչքերից դանդաղ ցած են գլորվում արցունքների գնդիկները։

Նա մատ է վազում, գրկում ամուսնուն, ամուր սեղմում կրծքին... Սովետական բժիշկների հոգատար խնամքի հետևանքով, Մաղաթյանը շատ կարճ ժամանակամիջոցում առողջացավ և նշանակվեց այն գնդերից մեկի հրամանատար, որը պատրաստվում էր մեկնելու Ստալինգրադի ռազմաճակատ։

[1] Արաքսյան՝ Մաղաթյանի կինը լսելով, որ վիրավոր Մաղաթյանին տեղափոխում են Սարատովի հոսպիտալ, անմիջապես մեկնում է այնտեղ և գտնում իր ամուսնուն։

* *
*

1942 թ. նոյեմբեր ամիսն էր։ Փոխգնդապետ Մաթեւոս Մադաթյանի ղեկավարած գունդը Վոլգայից հարյուր կիլոմետր արևելք բեռնաթափվեց և այնտեղից ռազմաճակատի զորային միավորումների հետ միասին երթային կարգով շարժվեց դեպի Ստալինգրադյան հարավարևելյան ճակատամասը։

Երթը կատարվեց արտակարգ արագությամբ։ Գունդը ճանապարհին համարյա կանգ չէր առնում։ Շարժման արագությունը համակել էր ամենքին։ Միայն փոխգնդապետ Մադաթյանին էր թվում, որ իր գունդը խիստ դանդաղ է շարժվում։ Նա գիտեր, որ այդ օրերին ստալինգրադցիները նախապատրաստվում են նոր աննախընթաց դաժան և հուժկու գոտեմարտի։

Գունդը մյուս միավորումների հետ միասին Վոլգային մոտեցավ Ստալինգրադի պաշտպանության ամենածանր օրերին։ Չէր կարելի սպասել դիշերային դիտանցման։ Դյուրին բան չէր գնդի համար արագորեն Վոլգան անցնելը, երբ երկնքում սավառնում էին հակառակորդի հարյուրավոր ինքնաթիռներ, երբ ֆաշիստական վնասիրողների ականանետները կրակի տակ էին վերցրել գետափը։ Մարդիկ նստում էին լաստանավերը, լաստակամուրջները, նավակները. «Պատրաստ է» — հայտնում էին թիավարները։ «Առա՛ջ, առա՛ջ»,— տրվում էր հրամանը։ Ճեղքելով կապույտ ջրերի ալիքները, նրանք սլանում էին դեպի մյուս ափը։

Հարյուրավոր աչքեր լարված ուշադիր նայում էին մերթ սահող ալիքներին, մերթ երկնքին, մերթ սպիտակավուն ծխի մեջ ծածկված դաժան ու հերոսական ճակատագիր ընդունած քաղաքին։ Լաստանավերը երերում էին ալիքներից։ Երկինքը պայծառ էր, արևը վառ, բայց ոչ ոք չէր նկատում բնության գեղեցկությունը, ոչ ոք

Նկ. 4. Հրետանու և ականների ճակատամարտը

չէր զգում գետի հաճելի զովությունը։ Գետանցումը կատարվեց լարվածորեն։

Փոխգնդապետ Մադաթյանին հրամայված էր իր միավորումները դասավորել Ցիցա լճի բնագծում և պատրաստվել հարձակման համար։ Օր ու գիշեր չդադարող արյունալի մարտերի և թշնամու ավիացիայի կատաղի գրոհների պայմաններում փոխգնդապետը զբաղված էր տանկիստների, հրետանավորների և ականաձիգների ուսուցմամբ, կատարելագործելով նրանց մարտական փորձը։

1942 թվականի նոյեմբերի 15-ին Մադաթյանի գունդն արդեն պատրաստ էր մարտական գործողությունների համար։ Նոյեմբերի 18-ին Մաթևոս Մադաթյանը հրաման ստացավ իր ուժերով համագործակցել հարևան զորամասերի հետ, ճնշել գերմանական զորքերի պաշտպանությունը, Պլոտովեցայի շրջանից Զիգա գյուղի Սվեսկայե կայարանի վրայով շարժվել Կալաչի ուղղությամբ, միանալ Ստալինգրադի հյուսիս-արևմուտքից հարձակվող Դոնի ռազմաճակատի զորքերի հետ և այդ ձևով մասնակցել Ստալինգրադի, նրա շրջակայքում գործող գերմանական զորամասերի օղակմանը։

Փոխգնդապետը հրամանատարներին և քաղաշխատողներին բացատրեց ստացած մարտական խնդիրը, ուշադրություն հրավիրելով պարտիական ուժի ճիշտ դասավորման և կոմունիստների ավանդարդային դերն ապահովելու հարցի վրա։

Հասավ ահեղ ճակատամարտի օրը՝ 1942 թվականի նոյեմբերի 19-ը։ Դեռևս մութը լույսից չբաժանված՝ գվարդիական ականանետները տվեցին առաջին համազարկը։ Հրավառ ականները սլացան դեպի հակառակորդի դիրքերը։ Այդ աղդանշանն էր՝ ամբողջ ճակատի երկայնությամբ ընդհանուր հարձակումը սկսելու։ Լուսաբացին, հարձակման աղդանշանային կրակից հետո,

գործի անցան ամբողջ ճակատի հրանոթներն ու ականանետները։ Հրետանային նախապատրաստության հետ միասին սկսվեց օդային հարձակումը։

Մաթևոս Մադաթյանի գունդը մյուս զորամասերի հետ միասին կռվի մեջ մտավ հրետանային նախապատրաստությունից անմիջապես հետո։ Աջ թևից գործող տանկային միավորումը խնդիր էր ստացել Պլոտովիտայի ուղղությամբ ոչնչացնել թշնամու պաշտպանական գիծը, ճեղքել այն և, բնակավայրերը դրավելուց հետո, զարգացնել հարձակումը դեպի հյուսիս-արևմուտք՝ հաջորդ բնագիծը գրավելու համար։ Հակառակորդը մարկային կրակի տակ էր վերցրել մեր հարձակվող միավորումներին և ձգտում էր կասեցնել նրանց առաջխաղացումը։ Սակայն թե սպանները և թե զինվորները, արհամարհելով տեղատարափ կրակը, հաղթահարելով բաղմաթիվ խոչընդոտներ, առաջ էին շարժվում մեծ արագությամբ։ Այդ հատվածում պաշտպանողական մարտեր էին մղում թշնամու հետևակային երկու գնդեր։ Դրանք իրենց քանակով գերազանցում էին մեր ուժերին։ Ուստի հակառակորդին հաղթելու համար հարկավոր էր ոչ միայն զինվորների խիզախությունը, այլև՝ հրամանատարների մարտական հնարամտությունը։

Գնդի հրամանատարը դիմում է մանևրի՝ վերադասավորում է ուժերը. նա իր ամբողջ ականանետները դասավորում է հարձակման հատվածի կենտրոնում. տանկային ցուցադրական հարձակում է կատարում հակառակորդի աջ թևից, իսկ բուն հարվածը հասցնում նրա կենտրոնին։ Տանկային և մոտոհետևակային ուժերով ճեղքում է հակառակորդի ճակատը և ջլատում նրա ռազմական ուժը։ Երկու ժամ տևող կատաղի կռվից հետո, թշնամու հետևակային մի գնդի համարյա թե ամբողջ կազմն անձնատուր է լինում։ Մադաթյանի գնդի

մյուս ստորաբաժանումները դուրս են գալիս հակառակորդի թիկունքը։

Թշնամու ոմբակոծության և հրետանային ուժեղ կրակի ժամանակ Մադաթյանը մեծ սառնասրտությամբ ղեկավարում էր մարտը։ Նա անցնում էր դումարտակից դումարտակ, ցուցում էր տալիս հրամանատարներին, մտերմաբար խոսում մարտիկների հետ, խրախուսում և սիրտ տալիս ամենքին։

Նրա հրամանով գնդի հրետանին, տանկերը և ականանետները մրրկային կրակ բաց արին հակառակորդի վրա։ Եվ համազարկային այդ ահավոր կրակը վճռեց մարտի ելքը։ Թշնամու դումարտակները համարյա ջախջախվեցին, կրակային ալիքի, ահ ու սարսափ մեջ ընկած նրանց հետևակային մյուս գնդի մնացորդներն անձնատուր եղան։ Առանց ժամանակ կորցնելու, Մադաթյանն առաջ էր մղում իր գնդի մարտիկներին, հիշեցնելով ռուս մեծ զորավար Սուվորովի խոսքերը՝ «դանդաղկոտությունը բազմապատկում է թշնամու ուժերը, արագությունը և հանկարծակիությունը քայքայում է նրան»։ Զարմանալի արագությամբ անվեհեր հրամանատարն իր գնդով գրոհեց հակառակորդի ուժեղացրած պահեստային դումարտակի վրա։ Գունդը իր հասցրած շշմեցուցիչ հարվածով համարյա ամբողջովին ոչնչացրեց այդ դումարտակը և գրավեց ռազմական շատ ավար։ Այստեղ գնդի հրամանատարը հետախուզություն է ուղարկում Զեղա գյուղը, իսկ ինքը, հարևան զորամասերի համագործակցությունն ուժեղացնելու նպատակով, ստուգում է կապը, սկսում է վերամիավորել իր միավորումները, մոտեցնում է ռեզերվները և թիկունքը։

Այդ պատասխանատու մարտական գործողությունները մի նոր հարուստ փորձ հանդիսացան Մաթևոս Մադաթյանի համար։ Գնդի հաջող մարտական գործողու-

թյունները հիացմունք էին պատճառել բարձր հրամանատարության։

Շուտով վերադառնում է հետախուզությունն ու հաղորդում, որ ֆաշիստները նոր ուժեր են կենտրոնացնում Զնդա գյուղի շրջանում։ Մադաթյանի ղեկավարած գունդը հետախուզության հետքերով, սրընթաց գրոհով առաջ սրշավելով, առանց հապաղման խոյանում է հակառակորդի զորքերի դասավորության վրա։

Ուշ երեկոյան Մադաթյանի ստորաբաժանումների ձեռնարկած հարձակումներն այնքան անսպասելի էին, որ, հանկարծակի բերելով հակառակորդին, կարճատև դիմադրությունից հետո փախուստի մատնեցին նրան։ Նոյեմբերի 22-ի լուսադեմին Մաթևոս Մադաթյանի ստորաբաժանումները մյուս զորային միավորումների հետ միասին արդեն դուրս են գալիս Վերխնի և Նիժնի Ցարիցինների և Սովետսկայա կայարանների ուղղությամբ, իսկ իրիկնադեմին՝ աղատագրում Սովետսկայան։ Նոյեմբերի 22-ի առավոտյան շատ վաղ այն զորամասերը, որոնք շարժվում էին Կալաչի ուղղությամբ անմիջական կապ էին հաստատել Ստալինգրադի հյուսիսից հարձակվող Դոնի ռազմաճակատի զորքերի առաջավոր ջոկատների հետ։ Այսպիսով, Սովետսկայա կայարանի և Կալաչի միջև իրար հանդիպեցին երկու ռազմաճակատների զորամասերը։

Լապիշև քաղաքը գրավելիս հակառակորդից խլվեց մեծ քանակությամբ ռազմական ավար, հրետանային բաղան, քսան և ութ տանկ, վեց ականակիր, գրավվեց երկաթուղային տասն և երկու էշելոն զինամթերքով ու պարենամթերքով։ Միաժամանակ գերի վերցվեցին չորս հարյուր զինվոր, քսանութ սպա։

Ստալինգրադի համար գերմանաֆաշիստական զորքերի դեմ մղվող մարտերում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելորեն կատա-

յելու և այդ գործում ցուցաբերած արիության և անվեհերության համար ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1942 թվականի նոյեմբերի 23-ի հրամանագրով փոխգնդապետ Մաթևոս Մադաթյանը պարգևատրվում է Լենինի շքանշանով։

* * *

Ավարտելով գերմանական զորքերի շրջապատումը Ստալինգրադի մոտ, Սովետական Բանակը թշնամուն նոր հարված հասցրեց Միջին Դոնի շրջանում։ Այստեղ գործող սովետական միավորումների առաջ Գերագույն Գլխավոր հրամանատարությունը խնդիր էր դրել՝ ճեղքել հակառակորդի պաշտպանությունը, դուրս գալ գերմանա-ֆաշիստական զորքերի թիկունքը Դոնի մեծ ոլորանի մոտ և զրկել նրանց շրջապատումից դուրս գալու հնարավորությունից։

Սկսվեց գերմանական օղակված բանակի ջախջախումը։

Ջախջախվեցին հակառակորդի 11 հետևակային, մեկ հեծյալ և երկու տանկային դիվիզիաներ, Սովետական Բանակի երկաթե օղակը սեղմվում էր գերմանացիների շուրջը։ Այսպիսով, մինչև 1942 թ. նոյեմբերի 25-ը ոչնչացվեց 95 հազար զինվոր և սպա, դերի վերցվեցին թշնամու ավելի քան 72 հազար զինվոր և սպա։

Ստալինգրադի մոտ փակուղու մեջ դնելով և կատաստրոֆի առաջ կանգնեցնելով իր բանակները՝ գերմանական հրամանատարությունը նրանց ազատելու հուսահատական փորձեր էր անում։ Դրա համար գերմանացիները Կաթելնիկովից դեպի հյուսիս ընկած շրջանում հավաքել էին զորքերի մեծ միավորում և դեկտեմբերի 12-ին նրան դուրս բերին հարձակման։ Այդ ուղղության վրա կենտրոնացած մեր ռեզերվները խնդիր ստա-

յան՝ ջախջախել թշնամու Կատելնիկովյան խմբավորումը, գերմանացիներին հետ շպրտել դեպի հարավ և պրկել նրանց Ստալինգրադի մոտ շրջապատված իրենց զորքերին միանալու վերջին հնարավորությունից։ Այս հրամանը ևս լիովին կատարվեց։ Գերմանացիները կորցրին՝ սպանված 21 հազար և գերի՝ հինգ հազարից ավելի մարդ։

1942 թ. դեկտեմբերի 16-ին մարտեր սկսվեցին Ստալինգրադի հյուսիսային մասում գտնվող երկաթգծի կենտրոնական կայարանի համար։ Այդ շրջանում գործում էր նաև գնդապետ Մաթևոս Մադաթյանի զունդը։ Հակառակորդը, այստեղ կենտրոնացնելով հիսուն տանկ, երեք հետևակային գումարտակ և ավտոմատավորների մի վաշտ, անցավ հարձակման։ Ֆաշիստները երեք անգամ գրոհեցին Մադաթյանի զորամասի դիրքերի վրա։ Մի օրվա ընթացքում կայարանը երկու անգամ ձեռից ձեռք անցավ։ Վերջապես հիտլերականները ստիպված եղան նահանջել, մարտադաշտում թողնելով 90-ից ավելի սպանված զինվոր ու սպա և ոչնչացված 36 տանկ։ Ֆաշիստները, հենց նահանջի ճանապարհին գրավելով Վորոշիլովի փողոցի երեք հարկանի շենքերից մեկը, այն դարձրել էին հենակետ, որը հարմար էր շրջանառն պաշտպանության համար։

Շենքում կային ավտոմատավորներ, ուժեղացված գնդացիրներով և ականանետներով, իսկ վերևի հարկում տեղավորված էին snայպերները։ Մեր ստորաբաժանումներից մեկը երեք օր անընդհատ հարձակվում էր այդ շենքի վրա, բայց հաջողություն չէր ունենում։ Հրամանատարությունն անհրաժեշտ համարեց խնդրի լուծումը հանձնարարել Մաթևոս Մադաթյանի զորամասին։ Գրոհող զորամասի մարտիկների հմտությունից և զորամասի հրամանատարներից շատ բան էր կախված։ Թշնամին դիմադրում էր կատաղի կերպով։ Մադաթյանը որո-

շեց դիշերային գրոհով պարտության մատնել նրանց։ Այդ որոշումն իրագործելու համար նշանակվեց չորս գրոհիչ խումբ։ Նախքան գրոհի անցնելը, հանձնարարվեց սակրավորներին շենքի ելքի և մուտքի մոտ կուտակել պայթուցիկ նյութեր և նախքան գրոհը՝ պայթեցնել դրանք։ Այդպես էլ արվեց։ Պայթյունը տեղի ունեցավ լուսաբացից առաջ։ Շենքում նստած թշնամու համար պայթյունն այնքան անսպասելի էր, որ նրանք հանկարծակիի եկան, այնքան շփոթվեցին, որ չկարողացան կրակ բացել մերոնց վրա։ Օգտվելով նրանց շփոթված վիճակից, գրոհողները մտան շենքը։ Մեկ ժամ տևող կատաղի մարտի ընթացքում նրանք պարտության մատնեցին հակառակորդին և տիրեցին շենքին։

Այդ հաջողությունից հետո Մադաթյանի զորամասը խնդիր ստացավ ոչնչացնել մեկ ուրիշ հենակետ, որը տեղավորված էր քաղաքի դպրոցներից մեկում։ Հակառակորդի ավիացիայի և հրետանու ռմբակոծության հետևանքով այդ շենքը կիսաքանդ էր։ Մնացել էին միայն երեք պատերը և նկուղն իր մուտքով։ Դա հակառակորդն օգտագործում էր որպես հենակետ և կայազորի թաքստատեղի։ Դպրոցի աջակողմյան մասում գերմանացիները փորել էին խրամատներ, իսկ հյուսիսային կողմը 7 մետր լայնությամբ և երեք մետր խորությամբ մի ձորակ էր, որտեղ պատսպարվում էր հակառակորդը։ Այստեղից էր նա ստանում լրացուցիչ ուժեր և զինամթերք։ Այդ շենքից ոչ հեռու կար երեք դղյակ։ Կրակային բոլոր կետերը պարսպած էին փշալարերով։

Մադաթյանը հրաման էր տվել մարտիկներին՝ գրավել դպրոցը, զրկել հակառակորդին այդ կարևոր հենակետից։ Այդ նպատակի համար առանձնացվեց երեք կործանիչ ջոկատ։ Ջոկատներն իրենց մարտական գործողությունները սկսեցին դպրոցի հյուսիսային կողմում գտնվող հիշված ձորակից։ Այդ խմբերից մեկին հրա-

մայված էր մոտենալ շենքին արևելյան կողմից, մյուսին՝ հյուսիս-արևմուտքից, իսկ երրորդին, որին ղեկավարում էր կապիտան Մկրտչյանը, մտնել ձորակը, ամրանալ այնտեղ և փակել թշնամու ճանապարհը։ Հրամայված էր հարձակվել լուսադրացին, հանկարծակիի բերել հակառակորդին։

Գրոհիչ խմբերի գործողությանն օժանդակում էր դնդի հրետանին։ Նախքան գրոհը հետախույզների միջոցով պարզվեց հակառակորդի կրակային կետերի դասավորումը։ Մեր հրետանային և ականանետային ուժեղ կրակից հետո գրոհիչ խմբերը սկսեցին մարտական գործողությունները։ Աջից հարձակվող խումբը, շենքի արևելյան կողմից անցնելով, հասավ փշալարերին, որտեղից մեր սակրավորները անցքեր էին բացել։ Կրտսեր սերժանտ Բաղդասարյանի ջոկը, սողալով դեպի կրակային կետը, հակատանկային նռնակներով պայթեցրեց այն։

Հրթիռի ազդանշանով զինվորները լցվեցին դպրոցի շենքը։

Կենդանի մնացած ֆաշիստները թաքնվեցին շենքի նկուղում։ Սովետական ռազմիկները մի քանի անգամ ֆաշիստներին առաջարկեցին անձնատուր լինել։ Նրանց մեջ գտնվող երեք հունգարացիները հանձնվելու փորձ են անում, բայց հիտլերականների կողմից գնդակահարվում են, որը ծանր ազդեցություն է թողնում մեր մարտիկների վրա։ Դրանից հետո վաշտի պարտկազմակերպիչ Բաղդասարյանը բացականչում է՝ «ընկերներ, երբ թշնամին անձնատուր չի լինում, նրան ոչնչացնում են»։ Եվ սովետական զինվորները սկսեցին ոչնչացնել ֆաշիստներին։

Հակառակորդի գնդակից վիրավորվեց Մաղաթյանի ուսը, սակայն քաջ հրամանատարը, ուշադրություն չդարձնելով վիրքի պատճառած ցավերին, շարունակում էր ղեկավարել մարտական գործողությունը։

Մինչդին գվարդիականները դրավեցին գյուղի շենքը և նրա շրջակա թաղամասը մաքրեցին թշնամուց։

Ստալինգրադը պաշտպանող զորամասերի անվեհեր հրամանատարներից մեկը՝ փոխգնդապետ Մաթևոս Մադաթյանը բարձր հրամանատարության առաջադրանքները գերազանցորեն կատարելու համար պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով։

Երեկո էր, մարտը դադարել էր։ Ռազմիկները հանգստանում էին։ Բանակային Լևշինն իր ընկերների հետ զրույցի ժամանակ Մադաթյանի մասին ասում էր.

«Նա մեր մարտիկների թանկագին բարեկամն է, սիրելին. նա և՛ ընկեր է, և՛ մարտիկ, և՛ հրամանատար... Շատ լավ հիշում եմ, կատաղի կռիվ էր, ինչպես ասում են գետինը շարժվում էր։ Գրոհի ժամանակ Մադաթյանը վիրավորվել էր։ Երկու մարտիկի հետ օգնության հասանք մեր սիրելի հրամանատարին։ Նա, հենվելով իմ ուսին, ոտքի կանգնեց, չհեռանալով մարտի դաշտից, մյուս երկուսին ասաց.

— Իմ քաջե՛ր, դեպի՛ մարտ, ես լավ եմ, դե՛հ, հիմա ձեզ տեսնեմ»։

Մադաթյանը Ստալինգրադ քաղաքի ծայրամասի փողոցներից մեկում, ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող մի բնակիչի պաշտպանությունը հանձնել էր դասակի հրամանատար Լասկունովի ստորաբաժանմանը։

Թշնամին ամեն գնով աշխատում էր գրավել այդ բնակիչը։ Փողոցի հեռավոր ծայրին երևացին վեց տանկ։ Հանկարծ տանկերի հետևից դուրս նետվեցին ֆաշիստ ավտոմատավորները։ Գործողություններն անմիջականորեն ղեկավարում էր ինքը՝ Մադաթյանը։

— Առա՛ջ, ընկերնե՛ր։ Ոչ մի ավազակ կենդանի չպիտի մնա,—ասաց Մադաթյանը առնական ձայնով։ Ոգևորված զինվորները ջախջախեցին թշնամու ավտո-

մատավորներին։ Ստորաբաժանման մարտիկ Մալիշևը այդ կռվում ձեռքի գնդացրով ոչնչացրեց մոտ երեսուն ֆաշիստական զինվոր։

Կարճատև, բայց արյունահեղ կռվից հետո Մադաթյանի զորամասը, հետապնդելով թշնամուն, մտավ նրա պաշտպանության գիծը, գրավեց Կուզմիչ գյուղը և նրանից դեպի հարավ գտնվող անանուն բարձունքը, որի վրայով անցնում էր խաչաձև ճանապարհը։ Նույն օրվա ընթացքում ֆաշիստների գործադրած բոլոր փորձերը՝ կորցրածը հետ գրավել — անհաջողության մատնվեցին։ Այդ նպատակով հաջորդ օրը հակառակորդը վերսկսեց հարձակումը Կուզմիչ գյուղից հարավ գտնվող բարձունքների վրա։ Ֆաշիստները, հույսը կապելով իրենց ուժերի գերազանցության հետ և հաշվի չառնելով կրած կորուստները, կատաղաբար հարձակվում էին։

* * *

Մութ գիշեր էր։ Ամպամած երկնքի վրա ոչ մի աստղ չէր երևում։ Երկինք ու գետին կարծես միացած էին թանձր սևաթուխ գանգվածով։ Ամեն ինչ լուռ էր։ Միայն գիշերային սառը քամին գուշակում էր մրրիկ ու անձրև։ Անտառով պատած բարձունքների վրա երբեմն փայլատակում էր կայծակը, և նրա խուլ որոտը մանր գլորյուններով տարածվում էր լայնածավալ տափաստաններում։

Գիշերային այս սոսկալի պահին փոխգնդապետ Մադաթյանի զորամասի մի քանի հետախույզներ խավարի մեջ շարժվում էին դեպի հակառակորդի գրաված գյուղը։

Գյուղը նույն պահին լուռ էր։ Կարծես ամեն շարժում, ամեն կենդանություն հանգել էր այնտեղ. մի տեղից միայն երևում էին լույսի նշաններ, դա գյուղի դպրոցի շենքն էր, որը կանգնած էր գյուղի աջ կողմում,

Դոնի ափին։ Նրա ետևից բացվում էր մի ձորակ, որը կորած էր մթության մեջ։

Դպրոցի գեղեցիկ շենքը բոլորովին մերկացրել էին ֆաշիստները։

Դասարաններից մեկում ֆաշիստ կապիտանը հավաքել էր սովետական քաղաքացիներին, քննում ու տանջում էր նրանց։

Սովետական հետախույզները մոտենում են դպրոցին, որտեղից լսվում էին անմարդկային տանջանքների ենթարկվող սովետական քաղաքացիների աղաղակներն ու հառաչանքները։ Հետախույզները որոշում են ոչնչացնել թշնամուն և ազատել սովետական քաղաքացիներին։

Հանկարծ որոտում են ավտոմատները։ Սարսափը տիրում է բոլորին։ Ֆաշիստներից մի քանիսն ընկնում են, իսկ մյուսները դցում են զենքերը և բարձրացնում ձեռքերը։ Հետախույզները թվով շատ չէին, բայց նրանք գործում են այնպես անակնկալ և արագ, որ թշնամին ոչինչ չի կարողանում անել։

Սովետական ազատված քաղաքացիների հետ միասին վերցնելով երկու «լեզուների», հետախույզները վերադառնում են զորամաս։

Մադաթյանի զորամասը կարևոր խնդիր էր ստացել, նա շարժվում էր դեպի առաջավոր խրամատները։ Մինչև խնդրի կատարումը անհրաժեշտ էր մարտական գործողությունն ուշադիր նախապատրաստել։

Դիտումների ու դիշերային հետախուզությունների միջոցով հայտնաբերվեցին մերձեցման համար ուղիներ, պարզվեցին հակառակորդի կրակակետերի դասավորումը, նրա կրակային հանգույցների տեղերը։

Հետախույզների ցուցումներով, սակրավորները ականներից մաքրեցին անցարանները, իսկ գերմանացիների հավանական հակագրոհների ուղղությամբ ականներ դրեցին։

Որոշված էր հիմնական հարվածը հասցնել 3643 բարձունքի ձախ թևին, որտեղ գերմանացիների պաշտպանության սիստեմը բաղկացած էր դղյակներից։ Ոչնչացնելով այդ դղյակները, կարելի էր ազատ կերպով շրջանցել դիմադրության հանդույցի թևը և հարվածել թիկունքից, քանի որ այդ հարվածի պաշտպանության խորքից թշնամին նշանակալի օժանդակություն չուներ։

Գիշերը պայմանավորված ժամին միանգամից լսվեց մի քանի պայթյուն։ Մեր մարտիկները գրոհեցին թշնամու ամրացած կետերը։ Մի խումբ ավտոմատավորներ վճռական շարժումով անցան առաջ և օղակեցին այնտեղ գտնվող դղյակը։ Նրանք գերմանացիներին հարվածեցին թիկունքից։ Մի այլ խումբ ներխուժեց թևերում մնացող հաղորդակցության անցքը և, նռնակներով իրեն համար ճանապարհ հարթելով, այն մաքրեց հակառակորդից։

Աջ թևում գործող միավորման մարտիկները մտան պաշտպանության խորքը տանող հաղորդակցության անցքը և, առաջ շարժվելով, նույնպես դուրս եկան թշնամու թիկունքը։ Գերմանացիները, վախենալով շրջապատումից, սկսեցին լքել իրենց դիրքերը։ Հենց որ առաջին բնագիծը գրավվեց, գրոհող վաշտերի հրամանատարները հրթիռներով ցույց տվին իրենց դասավորությունը, իսկ ձախ թևում հակառակորդն ուժեղ դիմադրում էր։

Գնդի հրամանատար փոխգնդապետ Մարթյանը մոտենում է Նաումովին, նրան ցույց տալով խրամատի հակառակ կողմը, ասում է. «Տեսնում ես ֆաշիստական գնդացիրը առաջ շարժվելու ոչ մի հնարավորություն չի տալիս։ Սողալով կմոտենաս և նռնակով կոչնչացնես դղյակում եղած գնդացիրը։ Հասկացա՞ր։

— Ոչնչացնել թշնամու գնդացիրը, ընկեր փոխգնդապետ,— զեկուցում է Նաումովը,— թույլ տվեք կատարելու Ձեր հրամանը»։

Սկսվում է կրակային օգնությունը։ Նաումովը սողնակ շարժվում է առաջ, դեպի հակառակորդի գնդացրային կետը։ Հրամանատարները և զինվորները լարված նայում են մարտիկի գործողությանը։ Շուտով լռում է աջակողմյան գնդացիրը։ Նրան հետևող մարտիկները հրճվում են, բացականչում՝ կեցցե՛, իրոք որ հերոս է։ Մադաթյանը լարում է իր ուշադրությունը դեպի հակառակորդի երկրորդ գնդացիրը։ Գնդացիրը պաշտպանված էր երեք կողմից թեթև գնդացրային կետերով։ Նաումովի ամեն մի շարժումը նկատվում էր նրանց կողմից, հնարավոր չէր մոտենալ գնդացրային կետին։ Հետ վերադառնալ, դա նշանակում էր լրիվ չկատարել հրամանը, իսկ ինչ է նշանակում չկատարել հրամանը, երբ գունդը նախապատրաստվում է գրոհի։ Այդ նշանակում է հետաձգել հարձակումը։ Ո՛չ, այդ կլինի դավաճանություն։ Պետք է անպայման ոչնչացնել գնդացիրը։ Նաումովը լավ քողարկում է իրեն, կպչելով գետնին սողում է դեպի գնդացիրը։ Հակառակորդը նկատում է Նաումովի շարժումն այն ժամանակ, երբ նա, թեքվելով ձախ կողքին, փորը ինչ վեր է բարձրանում խուրձ կազմած նռնակները նետելու համար։ Նա նետում է այն։ Գնդացրային կետը ոչնչանում է, բայց թշնամու գնդակը խոցում է Նաումովի աջ ուսը։ Վաշտի մարտիկները նկատում են, թե ինչպես Նաումովը հետ է դառնում և սկսում սողալ դեպի մեր դիրքերը։ Նաումովն ընկնում էր, բարձրանում, օգտագործելով հակառակորդի կրակի ընդմիջումները նորից վազում, նորից ընկնում, ապա ոտքի կանգնում, մինչև հասնում է մեր դիրքերից մեկ քառորդ կիլոմետրի վրա և շնչասպառ ընկնում։

— Ասյա՛,— գոչում է հրամանատարը.— առա՛ջ. փրկել հերոսի կյանքը։ Ասյան, վերցնելով իր պայուսակը, առաջ է սողում դեպի Նաումովը։ Նա մոտենում է վիրավորին։ Նաումովը ճանաչում է Ասյային։— Այդ

Նկ. 5. Բուժքրոջ օգնությունը վիրավոր մարտիկին

գո՞ւ ես, Ասյա՛։— Այո՛, ես եմ, եկել եմ քեզ փրկելու։ Նաումովը կորցնում է գիտակցությունը։ Ասյան բացում է մարտիկի կուրծքը և ականջը մոտեցնում նրա սրտին։ Սիրտը աշխատում է. կենդանի՛ է, կենդանի, հրճվում է, ինքն իրեն Ասյան։ Ուշքի է գալիս Իվանը։ Ասյան փընտրում է վերքը, այ մեկը, մյուսը, երրորդը, շտապ կապում է, վերցնելով Նաումովին միասին սկսում են սողալ։ Ֆաշիստներն ուժեղացնում են կրակը։

Թշնամու գնդակները թափվում են գարնանային կարկուտի նման։ Ասյան դադարում է սողալուց և ուշաթափված մնում տեղում։

Գնդի բուժակը սողում էր դեպի վիրավորները։ Նա մոտենում է Ասյային, մտերմությամբ ձայնում նրան, տակավին չտեսած նրա դեմքը։ Բայց Ասյան չի արձագանքում մոտեցող ընկերոջը։ Նա մահացել էր։ Բուժակը մոտենում է Նաումովին և կրակի տակից դուրս է բերում վիրավորին։

Փոխգնդապետ Մադաթյանը հետախուզության միջոցով ամենից առաջ ստուգեց և պարզեց հակառակորդի պաշտպանության սիստեմը, նրա ուժերի և կրակակետերի դասավորությունը։ Հրամանի համաձայն ամբողջ գիշերվա ընթացքում դումարտակները գործեցին, գլխավորապես, մանր մանր հետախուզային խմբերով, նրանք հաջողությամբ էին կատարում իրենց մարտական առաջադրանքները և հարուստ տեղեկություններ հավաքում թշնամու մասին։

Դեկտեմբերի 25-ին, օրվա երկրորդ կեսին, սկսեցին գործել գրոհային ջոկատները, մոտ մեկ վաշտի ուժով։ Հրետանավորներն ու ականանձիգներն իրենց կրակով աջակցում էին հետևակին՝ հարձակումը հաջողությամբ ղարդացնելու համար, քայլ առ քայլ հետ մղելով գերմանացիներին իրենց գրաված դիրքերից, Հակառա-

կորդը կատաղի դիմադրություն էր ցույց տալիս հարձակվողներին։

Մարտերը տևեցին ամբողջ երկու օր, երբեմն մեղմ, երբեմն՝ կատաղի։

Թշնամու դիմադրությունը թուլացնելու նպատակով, հրետանային նախապատրաստությունից անմիջապես հետո սկսվեց օդային հարձակումը։ Անվերջ դեպի թշնամու դիրքերը և նրա ռեզերվներն էին թռչում սովետական սավառնակները և ռումբեր թափում ֆաշիստական ամրությունների վրա։ Ինքնաթիռների մի օղակին հաջորդում էր մյուս օղակը։ Չկար մի քառակուսի մետր տարածություն, որը կրակի տակ չընկներ։ Հասել էր հաստատման ժամը։ Գերմանացիք նույնպես գործի դրեցին իրենց հրանոթներն ու ականանետները։ Հրետանային մենամարտը հետզհետե սաստկանում էր։

Ավելի դաժան մարտեր վիճակվեցին հետևակին։ Մագաթյանի գումարտակները մարտի մեջ մտան հրետանային և օդային նախապատրաստությունից անմիջապես հետո։

Գումարտակների խնդիրն էր՝ գրոհել թշնամու դիրքերի վրա թևանցելով բարձունքը, օղակել գերմանացիներին և մաքրել բարձունքը թշնամուց։

Հակառակորդը մրրկային կրակի տակ էր վերցրել մեր հարձակվող ստորաբաժանումները։ Նա ամեն կերպ ձգտում էր կասեցնել նրանց առաջխաղացումը։

Անհրաժեշտ էր լրացուցիչ տեղեկություններ հավաքել հակառակորդի ուժերի մասին։

Մարտի ծանր պահին Մագաթյանը սողալով մոտեցավ սերժանտ Միրզոյանին և ասաց.

— Ձեր ջոկը հետ քաշեք և պատրաստվեք հետախուզության գնալու։

Հետախուզության հիմնական խնդիրը կլինի՝ պարզել հակառակորդի դասավորության շերտերը, կրակային կետերը և ռեզերվների տեղերը։

Մի քանի ժամվա նախապատրաստական աշխատանքից հետո հետախույզները շարժվեցին դեպի Թշնամու թիկունքը։

Մութ գիշեր էր։ Սերժանտ Միրզոյանի հետախուզային ջոկի զինվորները իրենցից ոչ հեռու, Թշնամու թիկունքում տեսնում են, Թե ինչպես ճակատից թիկունք էին սողում մի քանի մարդ։ Զենքերն ուղղելով դեպի սողացողները, նրանք ուշադիր սկսեցին դիտել։ Վերջինները, ոչինչ չնկատելով, ուղղակի շարժվում էին դեպի հետախույզները։ Սերժանտ Միրզոյանը, նկատելով նրանց քաղաքացիական հագուստը, անվարժ և դանդաղ շարժումները, մտածեց, գերմանացի չեն, որովհետև մենք գտնվում ենք նրանց թիկունքում և թաքնվում ենք Թշնամուց, իսկ սրանք ումից են ուզում թաքնվել։

Հետախույզներից մեկն ասաց. անպայման մեր քաղաքացիներից են, որ մնացել են ֆաշիստների գրաված տերիտորիայում։ Մի բոպե ամենքը համոզվեցին այդ ենթադրության մեջ և ցանկանում էին ռուսերեն կանչել նրանց, երբ մեկը նրանցից խոսեց ռումիներեն։

— Ճակատից փախած ռումինացի զինվորներ են, ֆաշիստների մասին լավ տեղեկություններ կարող են տալ, ասաց մարտիկներից մեկը։

— Ցրիցները նրանց ոչինչ չեն հայտնում, հետևաբար նրանք ոչինչ չեն կարող իմանալ,— ավելացրեց Միրզոյանը։

Ցուրտ էր։ Փչում էր սառը քամին։ Զյունախառն անձրև էր տեղում։ Լուռ ու տխուր էր շրջապատը։ Ստալինգրադի արևմտյան բլուրների օձապտույտ շավղով հետախույզները սողալով անցնում էին մի ձորակից

մյուսը և փնտրում հակառակորդի շտաբները, պահեստները և հրետանու դիրքերը։

Սերժանտ Սերյոժա Միրզոյանը գնում էր առջևից։ Նա նայում էր հեռվից առկայծող կրակին։ Քաղցր հիշողություններ համակել էին նրան։ Նա մտաբերում էր հայրենի տունը, իր հարազատներին։ Արդյոք ինչ եղան, կենդանի՞ են, վառվո՞ւմ է պապական տան օջախը։

Հանկարծ նա սթափվեց և վերհիշեց, որ ժամանակը չէ նման մտածմունքներով տարվել։

— Գյուղն արդեն երևում է,— ասաց հետախույզներից մեկը։

— Իսկ դու, ընկե՛ր ենֆրեյտոր, լավ գիտե՞ս ճանապարհները,— դիմեց սերժանտն իր հետ գնացող Դոնի կազակին։

— Իհարկե գիտեմ, նույնիսկ մենակ կարող էի գնալ։ Դու չգիտես, որ ես այդ շրջանից եմ, Կաալուբա գյուղից։ Մենք այստեղից բերք էինք հավաքում, այնպես որ, բարեկամս, հանգիստ եղիր։

— Այստեղ ճանապարհը բաժանվեց, հիմա որ կողմով գնանք, ասաց Միրզոյանը։

— Այս ճանապարհներով ոչ մեկով մենք չպետք է գնանք, ֆաշիստները վիտում են ամենուրեք,— պատասխանեց կազակը։

Հետախույզները թեքվեցին ճանապարհից և կարճ ճանապարհով ուղղվեցին դեպի գյուղը, որ շրջապատված էր փոքրիկ բլրակներով և հեռվից լճակի տպավորություն էր թողնում։ Հետախույզները զգուշությամբ մոտենում էին գյուղին։ Ավիացիայի և հրետանու ռմբակոծություններից գոյացել էին թմբեր և փոսեր, որոնք դժվարացնում էին մարտիկների քայլը։ Երբ հետախույզները բավական մոտեցան գյուղին, լսեցին խոսակցության ձայներ։

— Պառկենք, ականջ դնենք,— կամացուկ ասաց սերժանտ Միրզոյանը և մեկնվեց ցեխոտ գետնին։

Հետախույզները հետևեցին իրենց հրամանատարի օրինակին։ Նրանք լսում էին ու դիտում։

Հավանաբար պաշտպանության բնագիծ է,— ասաց հետախույզներից մեկը։

— Ինչ պաշտպանության գիծ, չէ որ այս նրանց թիկունքն է,— կամացուկ ընդդիմախոսեց մեկ ուրիշը։

— Այո, բայց իմացիր, որ ներկա պատերազմում պաշտպանությունը մի քանի բնագծերից է կազմված։ Անհրաժեշտ է անցնել նրանց թիկունքը։

Նրանք շրջանցում են գյուղը և հասնում նրա մյուս ծայրամասը, թաքնվում հրետանու արկերից ավերված տներից մեկի բակում։ Շրջապատում չէր երևում ոչ մի կասկածելի բան։ Գրեթե լուսաբաց էր։ Հետախույզները բաժանվում են երկու խմբի։ Մի խումբը սերժանտ Բորիսովի ղեկավարությամբ մնում է տեղում, իսկ մյուսը՝ սերժանտ Միրզոյանի ղեկավարությամբ կապակ Նիկոլովի հետ գնում է 70-ամյա ծերունի Բալակինի տունը։ Բալակինը Նիկոլովի ծանոթն էր։ Նա շտապ-շտապ մոտենում է տանը և բախում դուռը։

— Ո՞վ է,— լսվում է ներսից ծերունու ձայնը։

— Ես եմ,— պատասխանում է Նիկոլովը։

Տան տերը, ճանաչելով Նիկոլովի ձայնը, իսկույն բացում է տան դուռը։ Սենյակում կիսախավար էր։ Տան վերին անկյունում, արկղի վրա դրված առանց ապակու լամպը ծխում էր և աղոտ լույս արձակում։ Ծերունին բարեկամաբար խոսում է հետախույզների հետ, որոնք, իրենց հերթին, սկսում են հարցեր տալ նրան։

— Հայրիկ, գյուղում շատ կա՞ և որտեղ է գտնվում։

— Դպրոցի շենքում...

Ծերունին մանրամասն տեղեկություններ է հաղորդում հետախույզներին։

Ջերմ հրաժեշտ տալով, հետախույզները բաժանվում էն ծերունուց և միանում ընկերներին։ Գյուղում եղած զորքը գնացել էր բնակիծ։

Հետախույզներն ուղևորվում են դեպի թշնամու շտաբը։ Այն գտնվում էր գյուղի արևելյան մասում։ Շենքի առաջին և երկրորդ հարկերն ավերվել էին ֆաշիստական ավիառումբերից։ Իսկ նկուղում տեղավորված էր նրանց շտաբը։ Շտաբի դռան առջև կանգնած էր պահակը։ Սենյակում սեղանի մոտ նստած էր մի սպա և ինչ որ փոփոխություններ էր կատարում քարտեզի վրա։ Ինչպես հետո պարզվեց, նա բանակի շտաբի կապիտանն էր և պաշտոնով՝ շտաբի պետի տեղակալ։ Լսելով դռան բախոցը, նա բարձրացնում է գլուխը, ներս է մտնում շտաբի պարետը, որը նոր էր վերադարձել ռազմաճակատից։

— Ինչ հաջողություններ կան ճակատում,— հարցնում է շտաբի կապիտանը։

— Հաջողություն չկա։ Մեր զորքերի թիվը հետզհետև պակասում է, իսկ սովետական բանակն ավելանում։ Ռուսական ձմեռը սաստկանում է։ Մերոնք այս անդամ դարձյալ պատրաստ չեն այդպիսի ցրտերի։ Տաք հագուստ չունենալու պատճառով օրական հարյուրներով դուրս են գալիս շարքից։

Նիկոլովը, որ գիտեր գերմաններեն՝ կապիտանի և պարետի խոսակցությունը թարգմանեց Միրզոյանին։

Կապիտանը, դայրացած ոտքի կանգնելով, սկսում է բայլել սենյակում, իսկ պարետը հուզված դուրս է գալիս։ Նա անցնում է պահակի մոտով, նստում մեքենան և ցանկանում է այն գործի դցել, բայց մեքենան սառել էր։ Ռազմաճակատի անհաջողություններից շփոթված, նա մոռացել էր մեքենայի ջուրը դատարկել։ Երկար չարչարվելուց հետո, ձեռքը թափահարելով, նա հեռանում է մեքենայից։

— Հարմար ժամանակ է,— ասում է սերժանտ Միրզոյանը և հարձակվում պահակի վրա, փակում նրա բերանը և, դաշույնի մի հարվածով զլորելով նրան, նշան է անում հետախույզներին շրջապատել շտաբը, իսկ ինքը և Նիկոլովը ներս են մտնում։ Սերժանտը հրամայում է կապիտանին բարձրացնել ձեռքերը։ Կապիտանը ցանկանում է զենքի դիմել, բայց ուշ էր։ Հետախույզները տեղն ու տեղը նրան դաշույնահար են անում։ Սեղանի վրա եղած բոլոր փաստաթղթերը և քարտեզները հավաքելով, նրանք դուրս են գալիս շտաբից։

Արդեն լուսաբաց էր։ Ռազմաճակատից դյուզ էին վերադառնում տասնյակ ավտոմեքենաներ վիրավոր ֆաշիստ զինվորներով։ Հետախույզները ճանապարհի աջ և ձախ կողմերից գնում էին արևելքի ուղղությամբ։ Նրանք հայտնաբերեցին հակառակորդի կրակային կետերի տեղերը և հրետանու երկարաձիգ դիրքերը։

Հետախույզները մոտենում էին կրակոցին։ Նրանց շուրջն արդեն սուլում էին արկեր ու ականներ։ Միրզոյանը ավելի ու ավելի էր շտապեցնում ընկերներին։ Հանկարծ նա մի խոր հառաչ է արձակում և կանգ առնում։ Վիրավորվել էր նրա ոտքը, և նա այլևս ի վիճակի չէր շարժվելու։ Ընկերները վերցնում են նրան և շարունակում ճանապարհը։ Սերժանտ Միրզոյանը Մաղաթյանի հրամանատարությամբ գործող գնդի լավագույն հետախույզներից էր։ Հերոսաբար կատարելով մարտական խնդիրը հետախույզները վերադարձան գնդի շտաբը։

Հետախույզները Մաղաթյանին զեկուցեցին, որ երկրորդ գումարտակի շրջանում դրությունը լուրջ է։ Ֆաշիստները, այնտեղ մեծ քանակությամբ տանկեր կենտրոնացնելով, հետ էին քշել մեր գումարտակին և գրավել նրա դիրքերը։ Հրանոթի արկից սպանվել էր հրամանատար մայոր Կորզունը։ Մաղաթյանը, լսելով այդ, շտապեց երկրորդ գումարտակ։ Նա որոշեց հետ վերցնել

Թշնամու կողմից գրաված գումարտակի դիրքերը։ Իր հետ վերցնելով հրամանատարներին, մտավ զինվորների շարքերը։ Ոգեշնչված հրամանատարի օրինակով գումարտակի մարտիկները պատրաստ էին հակագրոհի։ Միաժամանակ գործում էին թշնամու տանկերը, հրանոթները, ականանետները, գնդացիրները, ավտոմատները և ինքնաթիռները։ Դրությունը լուրջ էր։ Նահանջելու տեղ չկար։ Այդ ծանր կացությունից դուրս գալու միակ միջոցը հակառակորդին հաղթելն էր։ Դրա համար Մադաթյանը մտածեց առաջ քաշել գումարտակի և գնդի պահեստային ուժերը, գործի դնել հրետանին, գնդակոծել թշնամու ձախ թևը, ապա անցնել գրոհող հակառակորդի թիկունքը, նրան օղակել, փակել թշնամու նահանջի ճանապարհը, իսկ գումարտակի մնացած ուժերով հարվածել ճակատից և ոչնչացնել ինքնավստահ ֆաշիստական գաղանները։ Այդպես էլ նա հրաման տվեց։ Գնդի հրամանատարի կիրառած ճիշտ տակտիկան տվեց իր լավ հետևանքը։ Երեք ժամ տևող համառ մարտերից հետո, մեծաքանակ կորուստներ տալով, հակառակորդը դիմեց նահանջի։

* * *

Ստալինգրադը նմանվում էր հրաբխի, որի խառնարանից անվերջ որոտ ու ծուխ էր ժայթքում։ Ամբողջ գիշերը քաղաքի վերևում թրթռում էին հրացոլքերը։

Հարվածի ղծից դեպի ձախ դասավորված գվարդիական զորամասերը դետով բարձրացան, իջան ափը և աննկատելիորեն անհետացան ավերակների մեջ։ Նրանք լուռ սողում էին քարերի ու փշրված աղյուսների վրայով։

Լուսաբացին հիտլերականները դիմեցին վճռական հարձակման, բայց գվարդիականների թեային հմուտ գրոհը խառնեց հակառակորդի հաշիվները։ Գվարդիա-

կան զորամասը կարծես մոգական ուժով ոտքի կանգնեց և հարվածը հասցրեց այն կետին, որտեղից Թշնամին ոչ միայն վտանգ չէր սպասում, այլև չէր էլ ենթադրում այդ հնարավորության մասին։

Ֆաշիստական զորամասի ողնաշարը փշրվեց։ Նրա հարվածը շեղվեց իր ուղղությունից, և նա ստիպված եղավ անմիջապես պաշտպանության անցնել։

Գերմանացիները որոշ հաջորդականությամբ միմյանց հետևից կառուցել էին պաշտպանության երեք գիծ։ Ճեղքված էր միայն առաջինը։ Պետք էր անցնել կրակի երկու պատնեշների միջով։ Թշնամին նահանջեց և մտավ երկրորդ գծի հետևը։

Այդ ճեղքումը լուծում էր տակտիկական կարևոր խնդիրը՝ հանապարհ էր բաց անում դեպի թաղամասի հրապարակը։

Թշնամին արդեն վարժվել էր փողոցային մարտերի հին ձևին, ուստի հարկավոր էր խաբել նրան։ Փոխգնդապետն անձամբ մոտիկից դիտեց և հետախուզեց շենքերը։ Այդ նրա անխախտ սովորությունն էր։

Գիծը պետք էր ճեղքել թևային հարվածով։

Հակառակորդը պաշտպանվում էր ճակատից։ Մադաթյանը հրամայեց մարտկոցի հրամանատարին մոտ բերել հրետանին և մշակել թշնամու առաջին գիծը։ Հրետանավորը կատարեց խնդիրը։ Մադաթյանը մոտ քաշեց դումարտակներից մեկը։ Բայց դա ցույց էր։ Հակառակորդը կարծում էր, որ հրետանային կրակը ճեղքում է նախապատրաստում ճակատից։ Մինչդեռ գլխավոր ուժերը մոտենում էին թևերից։

Առաջին դումարտակը հանկարծակի դրոհով շրջապատեց թշնամու պաշտպանության մի կարևոր հանգույց։

— Հանձնվի՛ր, ֆրի՛ց,— գոչում էին մարտիկները նռնակները պատրաստ պահած։ Պատասխանն ուշանում

էր։ Նռնակները տեղացին հանդուցյի վրա։ Գնդացիրները լռեցին, գերմանացիները թաղվեցին իրենց հողաբների մեջ։

Թշնամին, որ կատաղի դիմադրում էր, տեսնելով շրջապատման վտանգը՝ թողեց դիծը և նահանջեց պաշտպանության հաջորդ դիծը։

Կրակը դադարեցնել էր արդեն։ Մարդիկ, քնից արթնացածի պես, նայում էին իրենց շուրջը։ Ընկերներից ոմանք ընկել էին հերոսի մահով, ոմանք վիրավորվել էին, սակայն նրանք հաղթել էին։

Սնայպերները մեծ դեր էին կատարում Ստալինգրադի պաշտպանության ժամանակ։ Փողոցային մարտերի բարդ պայմաններում, շենքերի խորշերում սնայպերը հնարավորություն ուներ ցուցաբերելու իր նախաձեռնությունն ու հնարամտությունը, որը հատուկ նշանակություն էր ունենում Ստալինգրադի փողոցային մարտի ժամանակ։ Գնդի հրամանատար Մագաթյանը նրանց անվանում էր «վրիժառու»։ Հենց այդպիսին էր նշանավոր սնայպեր Խաչատրյանը։ Նա երկար ժամանակ մտածում էր, թե ինչպիսի տեղ գրավի։ Արդյոք ներքնատա՞նը, առաջին հարկո՞ւմ, թաքնվի բաղմահարկ տան կտուրից թափված աղյուսների կույտի մեջ։ Նա դանդաղորեն և հետաքրքրությամբ դիտում էր մեր պաշտպանության առաջամասի տները՝ այրված լուսամուտներում, խճճված երկաթե դիսակների պես կախկխված արմատուրան, միջհարկային ծածկույթների կորացած դերանները, վանդակապատերի բեկորները, բոցերում խունացած նիկելապատ մահճակալների կմախքները։ Նրա սևաթույխ խոխոշ աչքերը որսում և արձանագրում էին բոլոր առարկաները։ Խաչատրյանը ընտրությունը կատարեց՝ բարձր տան շքադռնով ու շքանդված սանդուխքով բարձրացավ չորրորդ հարկի հարթակը, հենց այդ էր, որ նա փնտռում էր։ Քանդված պատը բաց էր անում լայնարձակ մի տե-

սագաշտ։ Ուղիղ դիմացը և մի քիչ թեք կանգնած էին գերմանացիների կողմից գրաված տները, դեպի աջ անցնում էր ուղիղ և լայն մի փողոց, ավելի հեռու. 500—600 մետր տարածության վրա նկատվում էր հրապարակը։ Այդ բոլորը գտնվում էր գերմանացիների ձեռքում։ Խաչատրյանը տեղավորվեց սուր ցցված պատի ամանդխահարթակում, տեղավորվեց այնպես, որպեսզի ցցվածքի սուվերն ընկնի իր վրա։ Այդ սուվերում նա դառնում էր միանգամայն անտեսանելի, երբ շուրջն ամեն ինչ լուսավորվում էր արևից։ Նա հրացանը հենեց բաղրիքի շուգունե ճամուկին, նայեց ներքև, սովորականի պես նախատեսալ հարվածի որոշ օբյեկտներ։

Գիշերը վրա հասավ։ Չէր կարելի կրակել։ Կրակոցի լսելիությունը իսկույն կմատներ սնայպերին։ Նա հետ քաշվեց իր տեղից և պառկեց հատակի վրա՝ սպասում էր։ Լուսանում էր։ Տան անկյան ետևից դուրս եկավ մի գերմանացի էմալապատ դույլը ձեռքին։ Հետո արդեն Խաչատրյանը իմացավ, որ այդ ժամին գերմանական զինվորները միշտ դույլերով լվացվելու ջուր են տանում սպաների համար։ Խաչատրյանը կրակեց։ Գերմանացու դիակը ետ ձգվեց, դույլը ձեռքից ընկավ, զինվորը մեջքի վրա ընկավ։ Ապա հայտնվեց երկրորդը, որը նույնպես չանցավ։ Խաչատրյանը որոշեց այն ճանապարհը, որով գերմանացիները գնում էին շտաբ։ Որոշեց նաև այն ճանապարհը, որով գերմանացիները ռազմամթերք էին տանում դիմացի տանը նստած գնդացրորդների համար, ինչպես և այն ճանապարհը, որով գերմանացիները ճաշ և ջուր էին տանում։ Ճաշին գերմանացիները ականանետային ուժեղ կրակ բացին, դա շարունակվեց մոտ 30—40 րոպե, և ապա նրանցից մեկը բղավեց՝ «ռուս ճաշել»։ Հաղթության այդ կոչը կատաղեցնում էր Խաչատրյանին։ Նրան, արևոտ Հայաստանի այդ ծիծաղկոտ պատանուն զզվելի էր թվում այն, որ գերմանացիները

փորձում էին իր հետ կատակել ողբերգարար ավերված այդ քաղաքում։ Դա վիրավորում էր նրա անաղարտ հոգին, և նա առանձնապես անողոք էր ճաշի ժամին։ Նա ատամները կրճտացնում էր ֆաշիստներին գետնին սեղմելու, գետնի մեջ մխրճելու ցանկությունից։

Առաջին օրվա վերջում Խաչատրյանը տեսավ մի սպայի, իսկույն երևում էր, որ դա մի բարձր աստիճանավոր էր։ Նա քայլում էր վստահորեն։ Բոլոր տներից դուրս էին վազում նրա ենթականները, ցցվում նրա առաջ։ Խաչատրյանը նորից կրակեց, սպան գլորվեց կողքի վրա։

Նա մի այլ դյուտ էլ արեց, որը նրան օգնեց դառնալ հակառակորդի համար անտեսանելի։

Ավելի հաճախ սնայպերը հայտնաբերվում է կրակոցի ժամանակ, կրակոցի պահին անտեսանելի մնալու համար Խաչատրյանը կրակում էր միշտ սպիտակ ֆոնի վրա։ Առաջին օրվա վերջում գերմանացիները չէին քայլում, այլ վազում էին, երկրորդ օրվա վերջում նրանք սկսեցին սողալ։ Հինգերորդ օրը Խաչատրյանը վերահրսկողության տակ էր պահում դեպի գերմանական տները տանող բոլոր ճանապարհները։

* * *

Ցերեկվա ընթացքում գերմանացիները մի քանի կատաղի ղրոհ ձեռնարկեցին Մադաթյանի գնդի վրա, սակայն ոչ մի քայլ չկարողացան առաջանալ դեպի Վոլգա։ Գերմանական տասնյակ տանկեր ջարդվեցին ու այրվեցին այդ օրվա ընթացքում։ Գերմանացիների հարյուրավոր դիակներ փռվեցին գնդի պաշտպանության գծի առաջ։

Առաջավոր գծի խրամատներն ամայացան։ Մարտիկներն ու հրամանատարները խցկվեցին իրենց սառն ու խոնավ բլինդաժները, որտեղ իշխում էր խանձահո-

տը։ Պահակակետերում մնացին միայն ժամապահները։ Ամբողջ առաջավոր գծում արագ հաստատվում էր ճակատային յուրահատուկ զգայուն լռությունը։

Թեթև ծխի պես ամեն կողմից հոսում էր մթնշաղը, սակայն սուր աչքը կարող էր հեռուն տեսնել։ Ամբողջ դաշտը փորփրված էր արկերով ու ականներով։ Տեղ-տեղ ձյունը ասես երկաթն ավելով մաքրված էր, տեղ-տեղ էլ խառնված էր հողի հետ։ Եվ ամենուրեք, խրամատների վրա նրանց մեջ երևում էին դիակների սև գծեր։ Իսկ մի քանի ժամ առաջ, ամբողջ օրը մոլագար ուժով դաղդղել էին կրակն ու երկաթը։ Այնտեղ կիսամահ վիճակում կանգնած էին «Կրասնի օկտյաբր» և «Բարիկադի» գործարանները։ Այս բոլորից հետո դարձյալ ֆաշիստներին չհաջողվեց Սովետական Բանակի զորամասերը նետել Վոլգայի ջրերը։

Կռվող երկու կողմերը, խրամատավորված և քողարկված՝ կանգնած էին դեմ դիմաց, իրար շատ մոտ։ Տեղ-տեղ նրանք բաժանված էին լինում 20—25 մետր տարածությամբ։ Հաճախ տեղի էին ունենում նռնակամարտեր։

Քաղաքի պաշտպանների հակագրոհներն ավելի և ավելի հանդուգն էին դառնում և ահ ու սարսափ տարածում հակառակորդի շարքերում։

Ստորաբաժանումներից մեկի կրտսեր սերժանտ Միրզոյանը ղեկավարում էր մարտը բաղմահարկ մի տան սանդուխքների վրա։ Նռնակների կապոցները ձեռքներին սանդուխքներով կայծակի արագությամբ սլանում էին կրտսեր սերժանտի քաջ մարտիկները։ Դիվարդիականները ոչնչացրին ֆաշիստներին այդ տան կիսավեր հարկում։ Դա ոչ թե հերոսական մի դրոհ էր, այլ տասնևութ ժամ տևող մի մարտ։

Ֆաշիստական 371-րդ դիվիզիան ևս մի քանի անգամ դրոհեց Մաթևոս Մադաթյանի զորամասի դիրքերի

վրա։ Նա ետ մղեց հակառակորդի հարձակումները և, ճեղքելով թշնամու պաշտպանության գիծը, անցավ նրա թիկունքը։ Վրա հասավ ձմեռային խավար գիշերը։ Ֆաշիստները խուսափում էին գիշերային մարտերից։

Անհրաժեշտ էր մինչև լուսաբացը թշնամուն պարտության մատնել, սակայն պատերազմի մեջ ամեն որոշում չէ, որ իրագործվում է։ Պետք է կռահել նաև թշնամու խորդախությունները և կուրորեն չտարվել միայն սեփական նախադրյալներով։ Այդպես էր մտածում Մադաթյանը։ Նա հրամայեց հետախուզությամբ պարզել թշնամու ուժերի դասավորությունը։ Հետախուզողները պարզեցին, որ ֆաշիստները կտրել են զորամասը մեր գլխավոր ուժերից։ Կես գիշերին Մադաթյանը հավաքեց ստորաբաժանումների հրամանատարներին՝ նրանց կարծիքն իմանալու համար։ Խորհրդակցությունում արտահայտվողները զանազան կարծիքներ հայտնեցին, բայց ամենքի ցանկությունն էր իմանալ իրենց՝ Մադաթյանի որոշումը։ «Ջղիտի հետ դառնալ, այլ պիտի կռվել թիկունքն անցած ֆաշիստների դեմ։ Լուսաբացին, երբ նրանք հարձակման պատրաստվելու կլինեն, մենք դրանից առաջ կայծակի պես կպայթենք նրանց գլխին։ Ամեն ինչ կախված է մեզանից։ Եթե մեզ վիճակված է մեռնել, ավելի լավ է պատվով մեռնենք»։

Ստորաբաժանումները սկսեցին իրենց մարտական գործողությունները։ Մաթևոսը չէր կասկածում այդ պատասխանատու գործից պատվով դուրս գալու մասին։ Երբ սկսվեց գիշերային հարձակումը, թշնամին հանկարծակի եկավ։ Թշնամու շարքերում խուճապ էր տիրում։ Մաթևոսի զորամասը ձախ կողմից ճեղքեց թշնամու դասավորությունը։ Հիմա հարկավոր էր պատժել թիկունք անցածներին, ցույց տալու, որ նրանց այդ ավանտյուրան կործանիչ է հենց իրենց համար։ Այդ գիշեր և հաջորդ առավոտ Ստալինգրադի փողոցներում հիտլերա-

կան 371-րդ ընտիր դիվիզիայի գնդերից մեկն իսպառ ջախջախվեց, մարտի դաշտում թողնելով 400 դիակ։ Սակայն մարտը շարունակվում էր։

Մութը վրա հասնելուն պես Մադաթյանը հրամայեց փորել մեծ ու փոքր դիրքեր և քանդված հողը չքողարկել։ Հրամանը կատարելուց հետո մարտիկներն իսկույն հասկացան, որ իրենց գործը կեղծ խրամատավորում է։

—Թողնել դիրքերը և 200 մետր հետ քաշվել, փորել նոր, ավելի խոր դիրքեր և այնպես խնամքով քողարկել, որ տաս մետր հեռավորության վրա չնկատվեն այդ խրամատները,— կարգադրեց հրամանատարը։

Գիշերը սկսվեց։ Առաջին խրամատներից Մադաթյանի զինվորներից մի քանիսը, որոնց նա թողել էր այնտեղ, ուժեղ կրակ բաց արին թշնամու վրա և, դիրքերից դուրս գալով, սողալով հասան մյուսներին։ Թշնամին կարծեց, որ մերոնք ամրացված են հին տեղերում և սկսեց կրակ բացել հին դիրքերի վրա։ Մադաթյանի մարտիկները հանգիստ նստել էին նոր, ավելի ապահով խրամատներում։

Թշնամին գործում էր կատաղաբար, կրակն ու ծուխը պատել էին շրջապատը։ Քարուքանդ էին եղել հին դիրքերը, պայթող արկերից և ականներից արմատահան էին լինում ծառերը, թրատվում էին նրանց ճյուղերը, փշրվում տների պատերի աղյուսները, կտուրների կրպմինդրները։ Այդպես շարունակվեց մի քանի ժամ։

Թշնամին, կարծելով, որ մերոնցից ոչ մի կենդանի կամ մարտունակ մարդ չի մնացել, դիմեց գրոհի։ Ֆաշիստները գալիս էին իրենց սիրած հարձակման մեթոդով։ Գալիս էին մի քանի հարյուր զինվոր միանգամից, երթային համաչափ քայլերով։ Լսվում էին նույնիսկ հրամանատարների հրամանները։ Մերոնցից ոչ ոք չէր կրակում։ Շրջապատում ճնշող լռություն էր տիրում։ Նման դեպքում պետք է ունենալ տոկուն և հանգիստ ջղեր, արի

սիրտ։ Հակառակորդի ուժերի միջև ընկած տարածությունն աստիճանաբար փոքրանում էր։ Ահա արդեն ֆաշիստները հարյուր մետրի վրա էին։

Հրամայված էր չկրակել։ Գնդացրորդները, պառկած գնդացիրների մոտ, կաղմ ու պատրաստ սպասում էին նշանակված րոպեին։ Այժմ նրանք վաթսուն մետր հեռավորության վրա էին, լսվում էր հակառակորդի զինվորների համաչափ քայլերի դոփյունը։

—Լավ են գալիս,— ասաց Մադաթյանը և տվեց առաջին հրամանը։ Այդ աղդանշանի վրա միաժամանակ սկսեցին կրակ տեղալ գնդացրորդները, հրաձիգներն ու սնայպերները։ Ֆաշիստական զինվորները թափվում էին գետնին։ Թշնամին, իր հետևից դիակների կույտեր թողնելով, դեռ շարժվում էր առաջ։ Արդեն երեսուն մետրի վրա էին, երբ ահավոր թնդյունով պայթեցին ձեռքի նռնակները։ Հիտլերականները փրուվեցին դեմքին։

—Ուժե՛ղ, ուժեղ կրա՛կ,— հրամայում էր Մաթևոսը։

—Ավելի՛ ուժեղ։

Պավլովի ջոկը դիրք էր գրավել Կովալչուկից ոչ հեռու։ Պավլովը տեսավ անկյունից դուրս եկող ֆաշիստ զինվորներին, որոնք ինքնավստահ քայլում էին գումարտակի դիրքերի ուղղությամբ, Պավլովին զարմացրեց ֆաշիստների հանդգնությունը։

—Արդյոք ինչու նրանք այդպես քաջասիրտ դարձան,— հարցրեց նա Կովալչուկին։

—Հարբած են,— պատասխանեց նա։

Կովալչուկը նայեց այն կողմը։ Նրանք առաջ էին շարժվում անհամաչափ, երերուն քայլերով։

Ֆաշիստական հետևակը շատ մոտ էր գտնվում պաշտպանության առաջին գծին։ Մադաթյանի մարտիկները լուռ էին։ Փոխգնդապետը խստիվ արգելել էր զինվորներին մինչև իր հրամանը տեղից շարժվել, նրանց

դեմքերը մռայլ էին, և արտահայտությունները՝ խիստ։ Թշնամուն խուճապի մատնելու համար գնդի հրամանատարը որոշել էր կրակի հեղեղ թափել գերմանացիների գլխին։ Հիտլերականները գտնվում էին 100 մետր հեռավորության վրա, երբ Մադաթյանը հրաման տվեց կրակել։ Ֆաշիստները աղմուկով վազում էին դեպի մեր դիրքերը։ Մարտիկների համազարկից թշնամու զորամասի առաջին շարքերից շատերն ընկան անշունչ։ Կենդանի մնացածները շփոթված դես ու դեն էին վազում, սակայն սպաները հարկադրում էին կռվել։ Սովետական մարտիկների կրակից խուսափելու համար ֆաշիստները մտան ավերակների մեջ։ Թշնամու տանկերի վրա նստած ավտոմատավորները հասել էին գնդի ձախ թևում գտնվող նեղ փողոցին և շտապում էին անցնել մեր թիկունքը։

Դրությունը ճակատագրական էր։ Թաքստոցներում գտնվող ֆաշիստները, սիրտ առնելով, սկսեցին ճնշում գործադրել գնդի ձախ թևի վրա։ Հրամանատարը մարտի հանեց պահեստային միավորումը, որը հարձակվեց հակառակորդի հետևակի վրա։ Կացությունը չափազանց լուրջ էր, և կողմերից ոչ ոք չզիջեր, ով ում էր շրջապատել։ Մադաթյանը որոշեց դիմել սվինամարտի։ Սովետական մարտիկները կռվում էին հերոսաբար։ Մեծ կորուստներ տալով, ֆաշիստները նահանջեցին։ Մադաթյանի զինվորները, նրանց հետապնդելուց հետո, վերադարձան իրենց նախկին դիրքերը։

Լուսաբացին վերսկսվեց ճակատամարտը։ Կողմերը որոշել էին չզիջել մեկը մյուսին։ Բոպեներ էին լինում, երբ մեր զորամասի պարտությունն ակներև էր դառնում, բայց քիչ հետո վերստին ամրանում էր հաջողության հավատը։ Հավատի ամրացնող այդ ուժը՝ սովետական մարտիկների հայրենասիրությունն էր, գնդի հրամանատար Մադաթյանի գործադրած ճիշտ տակտի-

կան։ Նա իր հրամանատարության կետից տեսնում էր ծավալվող մարտը և ամեն վայրկյան համապատասխան արագ ու կտրուկ որոշումներ էր ընդունում։ Նա երբեք իր հավասարակշռությունը չէր կորցնում։ Նրա հրամանները հստակորեն հաղորդվում էին ստորաբաժանումից-ստորաբաժանում, դասակից-դասակ, և երբ տեսքը ներկայանում էր, նա դուրս էր գալիս հրամանատարական դիտակետից, նստում դեպի այն թեը, որի վրա թշնամին ճնշում էր գործ դնում։ Նրա շուրջ կողմը շաչում էին գնդակները, ականները փոսեր էին առաջացնում գետնի վրա, բայց նա աներկյուղ շարունակում էր իր գործը։ Մարտիկները, լսելով իրենց հրամանատարի ծանոթ ձայնը, նոր ուժ ու եռանդ էին ստանում։ Նա ամենուր էր ու ամենքի հետ։ Լրացուցիչ ուժեր էր նետում թույլ թևերին և թշնամու վրա կենտրոնացնում կրակային միջոցների համագործակցությունը։ Թուլացած ստորաբաժանումներն ամրանում էին, դառնում սեղմված բռունցք և կրկնապատկված ուժով հարվածում թշնամուն։

Դեկտեմբերի 5-ի առավոտյան հարձակման ազդանշանը՝ կարմիր հրթիռը երևալուն պես ամբողջ ճակատի երկարությամբ սկսեցին գործել սովետական հրանոթներն ու ականանետները։

Մեր հրետանավորներն աչքի էին ընկնում իրենց վարպետությամբ, հայրենասիրության վառ զգացմունքը և գալիք հաղթանակի հաստատուն հավատը թևավորել էին բոլոր մարտիկներին։

Հրետանային նախապատրաստությունից անմիջապես հետո սկսվեց օդային հարձակումը։ Սովետական ինքնաթիռները մարտական շարքերով սլանում էին դեպի թշնամու դիրքերը և նրա ամրությունների վրա ռումբեր թափում։ Չկար մի քառակուսի մետր տարածություն, որ կրակի տակ չընկներ։ Ամբողջ ռազմադաշտը դղրդում

էր համաղարկերի խլացուցիչ որոտից։ Դրանք Ստալինգրադը աղատագրելու համաղարկերն էին, որոնք ազդարարում էին ամբողջ աշխարհին, թե հասել է հիտլերականների հատուցման ժամը։

Թշնամին նույնպես գործի էր դրել իր հրանոթները ու ականանետները։ Բայց գերազանցությունը մեր կողմն էր։ Ինչպես օդում գերազանցում էին սովետական բազեները, այնպես էլ գետնի վրա գերազանցում էին սովետական հրանոթներն ու տանկերը։ Քանդվում էին հակառակորդի երկաթ-բետոնային ամրությունները։

Հրետանային մենամարտը հետզհետե սաստկանում էր։

Փոխգնդապետ Մադաթյանի զորամասը, ճեղքելով թշնամու պաշտպանության դիծը, կատաղի կռիվներով վերցրեց Շիլինովկա բնակավայրը և, ուժեղացնելով հարձակումը, հասավ Ռասոշկա գետին։

Գերմանացիները որոշել էին այդ բնադծի վրա կասեցնել մեր զորքերի առաջխաղացումը։ Սակայն ֆաշիստների այս համառ դիմադրությունն էլ չկարողացավ կանգնեցնել սովետական դվարդիականներին։ Չնայած դժվարությամբ, բայց նրանք հասան գետափ և նետվեցին ջուրը։ Կոտրելով սառուցի բարակ շերտերը, հաղթահարելով ջրի հոսանքը և մինչև գոտկատեղը սուզվելով սառը ջրի մեջ, նրանք անցան գետը և վճռականորեն հարձակվեցին ֆաշիստական զորքերի վրա։ Հետևակայինների հետևից գետն անցավ նաև գնդացրային ստորաբաժանումը։ Գնդացրորդները, հենակետեր գրավելով, հնարավորություն ստեղծեցին մյուս զորամասերին գետն անցնելու։ Այստեղ ևս թշնամու համառությունը կոտրվեց։

Ավտոմատավորների դասակը գնդի հրամանատար Մադաթյանից հրաման ստացավ՝ մինչև առավոտ գեր-

մանացիներին քշել Ստալինգրադից հյուսիս-արևմուտք գտնվող 119,7 բարձունքից։

Դիշերվա կեսին կրտսեր լեյտենանտ Մարտիրոսյանը իր դասակով մեկնեց կատարելու մարտական խնդիրը։

Խավար դիշեր էր։ Քայլելու ժամանակ ձյունը սառուցիկ ճռճռում էր։ Զինվորները դնում էին զույգ-զույգ և բաժանվել էին երեք խմբի։ Նրանք զգուշությամբ բարձրացան Կուրգան բարձունքը։ Չորս կողմից շրջապատեցին թշնամու խրամատները։

Դեկտեմբերյան ամպամած, մռայլ երկինքը նոր էր լուսավորվել, երբ գերմանացիները նկատեցին ավտոմատավորներին։ Սկսվեց փոխադարձ հրաձգություն։ Մինչև թշնամու դիրքերը մնում էր ընդամենը 25 քայլ։ Մարտիրոսյանի հրամանով՝ մարտիկները նետվեցին առաջ։

Միայն նա կարող է պատկերացնել այդ օրերի սարսափները, ով ապրել է այն։ Դա հավասար էր հրաբխից ժայթքող լավայի մեջ ինքնակամ ցատկելուն։

Հիտլերականների հրաձգությունը դադարեց։ Թիկունքում մնացած ընկերները ենթադրում էին, որ ամեն ինչ վերջացած է Մարտիրոսյանի մարտիկների հետ։ Մարտիկները հիտլերականների մի մասին ոչնչացրել էին, իսկ մյուսին խուճապի մատնել։ Հետևի խրամատից առաջ նետվեցին 7 ֆաշիստ։ Մարտիրոսյանը, այդ նկատելով, նույն վայրկյանին հակատանկային նռնակի մի հարվածով նրանց գետին փռեց։

Առավոտյան ժամը 7-ին բարձունքը ֆաշիստներից մաքրելու ժամանակ հերոսի մահով ընկավ Մարտիրոսյանը։

Ազատագրելով Կալաչը, մեր զորքերը կռվում էին Դոնի աջ և ձախ ափերին։ Ստալինգրադի հյուսիսում և հարավում գործող սովետական զորքերի միացումից հե-

ատ նրանք իրենց սվիններն ուղղել էին Ստալինգրադում օղակման մեջ ընկած ֆելդմարշալ Պաուլյուսի դիվիզիաների դեմ։

* * *

Ֆաշիստները Ստալինգրադի հյուսիս-արևմտյան մասում ունեին խոր էշալոնացված երկարատև պաշտպանության բնագիծ։ Կալաչի ու մեծ Ռասոշկա բնակավայրի շրջաններում բնական պայմանները մեծ չափով նպաստում էին պաշտպանվողներին։ Դեկտեմբերի 29-ի առավոտյան ժամը 6-ին, 112,9 բարձունքի հյուսիս-արևելյան լանջերից հանկարծ որոտացին երկու հարյուրից ավելի տարբեր տրամաչափի սովետական հրանոթներ ու գվարդիական ականանետներ։ Դա սովետական հրետանու՝ «պատերազմի աստծու» ուժն էր, որ քանդում, ավերում, տակն ու վրա էր անում թշնամու ամրությունները։ Հրետանային նախապատրաստությունը դեռևս չավարտած, գործի անցան տանկերը, որոնք ավտոմատավորներով շարժվեցին դեպի քաղաք։ Կարճ ու համառ ճակատամարտից հետո, դեսանտայինները դուրս քշեցին հիտլերականներին իրենց պաշտպանության առաջին գծից և հենց առաջին օրը ճանապարհ բացին մեր հետևակի համար դեպի Ստալինգրադ։ Մի քանի օր տևող հաղթական մարտերի շնորհիվ մեր զորքերը գրավեցին մի քանի բնակավայր։

Դեկտեմբերի 30-ին Մադաթյանի գունդը առաջադրանք ստացավ անցնելու հարձակման, խնդիր ունենալով ճեղքել հակառակորդի պաշտպանության գիծը, գրավել այն և հետագայում հարձակվել հաջորդ բնակավայրի վրա։ Հրետանային նախապատրաստությունից հետո հարձակման անցան հետևակային ստորաբաժանումները։ Զորքերի առջևից գնում էին սակրավորները։

Հակառակորդի ականանետային և դնդացրային կրակի տակ նրանք մաքրում էին ականապատված շինները, կտրատում էին փշալարերի խիտ ցանցը և ճանապարհ բացում հետևակի համար։

Հրետանային ու ականանետային կրակը դեռ չէր դադարել, երբ հակառակորդի գիրքերի վրա հարձակման անցան նաև Մատաթյանի դումարտակները։ Ֆաշիստները սոսկալի ուժեղ ու խլացուցիչ կրակ էին տեղում զինվորների վրա։ Սակայն հարձակվողները կանգ չառան։ Գնդի մարտիկներն ընդհուպ մոտեցան թշնամու խրամատներին։ Սկսվեց նռնակային մարտը։ Ֆաշիստները դիմեցին նահանջի։ Թշնամուն հետապնդող հետևակի հետ միասին շարժվում էին դումարտակային 45 միլիմետրանոց հրանոթները, հակատանկային հրացաններով զինված մարտիկները, դնդացրորդները։ Ամեն մի զինվոր իր հետ ուներ հակատանկային նռնակներ։ Հակատանկային զենքի բոլոր տեսակի միջոցները սովետական մարտիկներն օգտագործում էին խրամատներն ավերելու համար։

Գերմանական հրամանատարությունը, առաջ բերելով իր ռեզերվները, մյուս օրը առավոտ շուտ, հարձակման անցավ գրաված բնակավայրի ավերակներում խրամատավորված սովետական մարտիկների վրա։ Հակառակորդը նախատեսել էր ոչնչացնել սովետական ստորաբաժանումը և տիրել բնակավայրին։ Հետևակայինների հարձակմանը նախորդեցին հրետանային և ականանետային համազարկերը, որ տևեց քսան րոպե, որից հետո սկսվեց հետևակի հարձակումը։

Նրանք մոտենում էին ավերակների մեջ խրամատավորված մեր բանակայիններին։ Աղաղակով և ճիչերով թշնամին ցանկանում էր ահաբեկել սովետական հայրենասերներին։ Սովետական մարտիկների խրամատների առաջին գծում տեղավորված ջոկի հրամանա-

տար Խաչատրյանը հրամայեց իր զինվորներին՝ «Առանց իմ հրամանի ոչ մի կրակ, ոչ մի շարժում»։ Հիտլերականները մոտենում էին, կարծելով, թե ռուսներից ոչինչ չէր մնացել։ Նրանք հասել էին գյուղի եզրին։

Մադաթյանը զայրացել էր Խաչատրյանի վրա այն բանի համար, որ նա լռում էր, կրակով չէր դիմավորում ֆաշիստներին։ Հարձակվողները բարձրացան ոտքի և սկսեցին «հոզերանական» գրոհը։ «Կրա՛կ»,— հրամայեց Խաչատրյանը։ Հարձակվողների առաջին շարքը սեղմվեց գետնին։ Ոչ միայն ջոկի հրամանատարի, այլև նրա բանակայինների աչքերը լցվեցին հրճվանքի արտասուքներով։ Ֆաշիստները շարունակում էին առաջանալ իրենց դիակների վրայով։ Բայց քանի գնում, նրանց շարքերը նոսրանում էին։

Այդտեղ տեղի ունեցավ մի սրտաճմլիկ, ֆաշիստներին հատուկ հանցագործություն։ Սովետական մարտիկների հերոսական գործողություններից դաղաղած նրանք դիմեցին մի անմարդկային միջոցի։ Հավաքեցին իրենց գրաղեցրած վայրում մնացած սովետական քաղաքացիներին՝ կանանց, երեխաներին, ծերունիներին և նրանց հայտարարեցին, որ եթե ավերակներում ամրացված սովետական ջոկատն անձատուր չլինի՝ ապա իրենք կոչնչացվեն։ Նրանք ստիպեցին մերկ՝ քաղցից հյուծված սովետական քաղաքացիներին գնալ ֆաշիստ զինվորների առաջից։ Երեխաներին շարեցին բոլորից առաջ, նրանցից հետո կանանց ու տղամարդկանց, հրամայեցին համոզել սովետական ջոկատի մարտիկներին, որ անձնատուր լինեն։

Ֆաշիստական հրամանատարը նրանցից հետո շարեց իրենց զինվորներին և հրամայեց առաջ շարժվել դեպի ջոկի դիրքերը։ Կանայք, երեխաները, ծերերը լալով գրկախառնվում էին և հրաժեշտ տալիս միմյանց։

Նրանց դիմավորեցին ջոկատի դաշտային պահակները, որոնք խրամատավորվել էին իրենց դիրքերում և դիտում էին թշնամուն։ Սովետական մարտիկները, նկատելով դեպի իրենց դիրքերը եկող սովետական երեխաներին, կանանց ու ծերունիներին՝ դեպի երկինքը բաց թողած գնդակների ձայնով զգուշացրին եկողներին կանգնել։ Նրանք կանգնեցին։ Ետևում թաքնված ֆաշիստները նրանց ստիպեցին առաջ շարժվել։ Ջոկատի հրամանատարը, նկատելով ստեղծված իրադրությունը, դժվարացավ իսկույն ևթ որոշում ընդունել։ Մի պահ մտածելուց հետո, հրամայեց ջոկատի առաջավոր ջոկին՝ նահանջել և միևնույն ժամանակ կարգադրեց մարտիկներին մարտական դրության բերել սվինները։ Որոշվեց համախմբել մարտիկներին, պատրաստել նրանց սվինամարտի համար։ Առաջ բաց թողնել սովետական երեխաներին, կանանց, ծերերին և ապա սվինով դիմավորել խորամանկության դիմող թշնամուն։ Ձեռնամարտը սկսվեց աննկարագրելի համառությամբ։ Հուսահատության դառն աղաղակները խառնվել էին զենքերի շառաչյունի հետ։

Արևդակը դուրս եկավ սև ամպերի տակից։ Կարծես ցանկանում էր ականատես լինել մի քաջարի գործի, որ սկսել էին սովետական մարդիկ։ Սարսափելի բան է մարտի մոլեգնությունը, երբ առաջ է գալիս վրեժխնդրությունից։ Այն ծերունիները, կանայք ու պատանիները, որոնք մի քանի վայրկյան առաջ ֆաշիստական բռնության կոպիտ ձեռքից ստիպված հանձն էին առել մահ, այժմ վերցրին ընկած ֆաշիստների զենքերը և սկսեցին կոտորել կենդանի մնացած գաղաններին։ Այդ մարտում հերոսին վայել մահով ընկավ Խաչատրյանը։

Ջոհված Խաչատրյանի գրպանում գտան այս նամակը։ «Ընկեր Ի. Թարվերդյան. նոր էր վերջացել այս-օրվա ճակատամարտը, երբ ստացա իմ ընտանիքի նա-

մակը, որ նրանք ողջ և առողջ են և որ կարևորն է, նրանք պատմում են, թե ինչպես դուք ամեն կերպ օգնում եք նրանց, որպեսզի նրանք ոչ մի բանի կարիք չզգան։ Այդ հոդատարությունը, որով համակված է իմ ընտանիքը, ձեզ նման սովետական հայրենասերի կողմից, մի նոր լիցք է տալիս ինձ գերմանա-ֆաշիստական զորքերի դեմ մարտնչելու համար։

Ես՝ հայ ժողովրդի զավակներից մեկը, արևավառ Հայաստանի զավակս, ինչպես և Սովետական Բանակի

Նկ. 6. Սովետական զորքերի կողմից գերմանական ֆելդմարշալ Պաուլյուսի գերումը

ամեն մի մարտիկ, շատ լավ եմ հասկանում, որ պաշտպանում եմ իմ երկիրը և հայրենիքը, իմ երջանկությունը, որը վերածնվեց սովետական իշխանության շնորհիվ և որտեղ էլ գտնվեմ, ինչպիսի ծանր օրեր էլ ապրեմ, երբեք չեմ մոռանա, որ աճել, դաստիարակվել եմ

Սովետական իշխանության ժամանակ։ Մեզ համար չկա ավելի թանկ բան, քան Հայրենիքի ազատագրումը»։

1943 թ. փետրվարի 2-ին գեներալ-գնդապետ Կ. Կ. Ռոկոսովսկու հրամանատարությամբ գործող Դոնի ռազմաճակատի զորքերի խորտակիչ հարվածների տակ Ստալինգրադի շրջանում գործող ֆաշիստական երեք հարյուր երեսուն հազարանոց բանակն ամբողջովին ջախջախվեց և հարկադրված եղավ դադարեցնել ապարդյուն դիմադրությունը։ Հրդեհներով, հրացոլքերով լուսավորված Վոլգայի ափերին իրենց անփառունակ վախճանը գտան ֆաշիստական հարյուր յոթանասուն հինգ հազար հրոսակներ։

136,650 ռազմամոլ հիտլերականներ, քսան և հինգ գեներալներ, ֆելդմարշալ ֆոն Պաուլյուսի գլխավորությամբ անձնատուր եղան հաղթող Կարմիր Բանակին։

Հավերժական փառքով պսակվեց Ստալինգրադի աշխարհահռչակ ճակատամարտը։ Դա սովետական ռազմական արվեստի փայլուն հաղթանակն էր, սովետական մարդկանց անսկզբն կամքի հաղթանակը։ Ստալինգրադում տարած հաղթանակը իրավացիորեն համարվում է գերմանա-ֆաշիստական բանակի մայրամուտը։

* * *

Գերագույն Գլխավոր հրամանատարության հրամանով, բացառիկ լարված ռազմա-ստրատեգիական պայմաններում, 1943 թվականի հուլիսին, ռազմաճակատի կենտրոնական և հարավային մասերում գտնվող սովետական զորքերն անցան նոր հարձակման։

Դեռ մութ էր, երբ իր առաջին համազարկը տվեց զվարդիական ականանետը։ Երկաթգծերի վրայով կայծակի արագությամբ դեպի թշնամու դիրքերը սլացան հրավառ ականները։ Դա ամբողջ ճակատով խարկովի

ուղղությամբ ընդհանուր հարձակում սկսելու ազդանշանն էր։

Կենտրոնական և հարավային ռազմաճակատների բոլոր հատվածներում միաժամանակ որոտացին բոլոր հրանոթները և ականանետները։

Փոխգնդապետ Մաթևոս Մաղաթյանի ղեկավարած զորամասը, ռազմաճակատի մյուս միավորումների թվում, սրընթաց գրոհով մոտեցավ հակառակորդի պաշտպանությանը և ֆաշիստների հետ կռվի բռնվեց։

Համառ մարտեր էին գնում ամեն մի բլրակի համար, ամեն մի ձորակի համար։

Առաջին գումարտակը գրոհում էր բլրի ուղղությամբ։ Գումարտակի հրամանատարի բաղաքական գծով տեղակալ կապիտան Իվանովը գերմանացիների դիրքերի վրա գրոհի էր տանում մի խումբ ռազմիկների։ Նրանց խնդիրն էր՝ թեանցել ձորակը, արևմուտքից դրավել իշխող բարձունքը և, այդպիսով, ապահովել մյուս ստորաբաժանումների առաջխաղացումը։ Թշնամին անմիջապես գնդացրային կրակը փոխեց իր դիրքերին մոտեցող զինվորների վրա։ Կապիտան Իվանովը մահացու վիրք ստացավ, բայց ընկած տեղից վեր կացավ ծնկների վրա, ձեռքով նայեց դեպի թշնամին և գոչեց իր մարտիկներին. «Հանո՛ւն Հայրենիքի, առա՛ջ»։

Գրոհողների վրա առանձնապես կատաղի կրակ էր վարում ձախ թևում եղած գերմանական դզոտներից մեկը։ Փոխգնդապետ Մաղաթյանը երկրորդ գումարտակի հրամանատարին խնդիր տվեց՝ ինչ գնով էլ լինի, արագ ոչնչացնել դզոտը, հակառակորդին զուրկ թողել բարձունքից և ապահովել մարտական գործողության հաջող զարգացումը։ Այդ գումարտակի երկրորդ վաշտի երկրորդ դասակի հրամանատարի օգնական՝ ավագ սերժանտ Պավլովը, դեռևս գրոհը չսկսած, երդվեց առաջինը հասնել բարձունքի գագաթին և այնտեղ հասցնել գնդի դրոշը։

Մարտը դնալով թեժանում էր։ Տասնյակ սովետական ատնիվ զինվորներ արյան գնով սրբությամբ կատարում էին իրենց պարտքը հայրենիքի հանդեպ։ Եվ այն պահին, երբ թշնամու կրակակետը մի քանի վայրկյանով ընդմիջում տվեց, Պավլովը տեղից բարձրացավ, բոլոր ուժերը հավաքեց, վազեց դեպի թշնամու կրակակետը։

Հիտլերականները, տեսնելով, որ դյուցազնական թափով իրենց վրա է գրոհում սովետական հայրենասերը, նրա ուղղությամբ կենտրոնացրին գնդացրի ավտոմատների կրակը։ Կտրիճ ռազմիկը վիրավորվեց, բայց, արհամարհելով մահը, նետվեց թշնամու կրակակետի վրա և նռնակով ոչնչացրեց այն։ Մի քանի րոպեից հետո մեր ստորաբաժանումները բարձունքի գագաթին էին։ Արիասիրտ ռազմիկի տարած գնդի գրոշը ծածանվում էր բարձունքի վրա։

Մադաթյանի ստորաբաժանումներն իրենց մարտական հատվածում հաջողությամբ առաջ շարժվելով, իրիկնադեմին հասան խիստ ամրացված հաջորդ բարձունքին, որը շրջապատված էր դզոտներով ու գոտերով։ Նրանց միջանցքներում դրված էին գնդացիրներ։ Պաշտպանության երկրորդ կարգում քողարկված էին հրանոթներ և ականանետներ։ Ձենքի բոլոր տեսակները գործադրելով հիտլերականները համառությամբ պաշտպանում էին այդ բարձունքը։

Ֆաշիստները իրենց ուժեղ հրաձգությամբ ստիպեցին ճակատից հարձակվող գումարտակին կանգ առնել և սեղմվել գետնին։ Սակայն Մադաթյանի գնդի աջ թևում գործող փոխգնդապետ Կիսիլյովի զորամասի ակտիվ գործողությունները օգնեցին գնդին։

Թշնամին հետզհետե ուժասպառ էր լինում։ Մեր զորամասը փոխգնդապետ Կիսիլյովի ստորաբաժանումների հետ առաջ էր շարժվում։ Ձախ թևից անմիջապես

հարձակվում էր Մադաթյանի գնդի առաջին գումարտակը։ Նա ուղղակի գրոհում էր բարձունքի գագաթը, առաջադրանք ունենալով առաջինը հասնել այնտեղ։ Այդ գումարտակի ջոկերից մեկը, սերժանտ Պողոսյանի գլխավորությամբ, առաջինն էր, որ դուրս եկավ ելման դիրքից և սկսեց անընդհատ ավտոմատային կրակ տեղալ հակառակորդի վրա։ Հասնելով ֆաշիստական դիրքերին, առյուծասիրտ մարտիկները ուժգին գրոհով խուժեցին հակառակորդի խրամատները։ Բռնվեցին ձեռնամարտի։ Թշնամին չդիմացավ, սկսեց նահանջել։

Մադաթյանը, գլխավորելով գրոհող գումարտակներին, գնում էր ռազմիկների շարքերում։ Մոտենալով հակառակորդի խրամատներին, խիզախ մարտիկները նռնակներով և ավտոմատային կրակով դուրս վռնդեցին հիտլերականներին նրանց պաշտպանության առաջին ընագծի խրամատներից և սկսեցին հետապնդել խուսափող ֆաշիստներին։ Առաջխաղացման ժամանակ առաջավոր վաշտը հանդիպեց ֆաշիստների ամուր հենակետերից մեկին։ Հակառակորդը, գործադրելով իր կրակային միջոցները, կասեցնում էր վաշտի առաջխաղացումը։

Ավելորդ զոհերից խուսափելու համար, հարձակվողներն անմիջապես խրամատավորվեցին և, իրենց հերթին, սկսեցին ուժեղ կրակ տեղալ թշնամու դիրքերի վրա։ Հետևակին օգնության հասան հրետանավորները և ականաձիգները, իրենց մրրկային կրակի տակ վերցնելով թշնամուն։

Կռիվը հետզհետե սաստկանում էր։ Ամեն մի ռազմիկ ձգտում էր կրակի միջով առաջ նետվել և աշքի ընկնել իր սխրագործություններով։ Դասակի հրամանատարի տեղակալ՝ ավագ սերժանտ Իվանովը առաջինը մոտեցավ հակառակորդի խրամատին և մեկը մյուսի հետևից սկսեց նռնակներ նետել։ Հիտլերականները հանկարծա-

կիի եկան։ Մի մասին հաջողվեց փախչել, իսկ 40-ի չափ գերմանական ու հունգարական զինվորներ անձնատուր եղան։ Բրիկնադեմին ստորաբաժանումներն արդեն դրավել էին բարձունքը։ Մութն ընկնելու հետ ճակատամարտը հետզհետե սկսեց մեղմանալ։

Զորամասի ռազմիկները՝ ռուս, ուկրաինացի, հայ, ուզբեկ, վրացի և այլ ազգի զավակները կողք կողքի հերոսաբար կռվելուց հետո հանդստանում էին։

Այդ մարտական գործողություններում Մաղաթյանի զորամասի տարած հաղթանակը հաշվի առնելով, Սովետական պետությունը բարձր գնահատեց փոխգնդապետ Մաթևոս Մաղաթյանի մատուցած ծառայությունները և պարգևատրեց նրան Լենինի շքանշանով։ Մաղաթյանին շնորհվեց գնդապետի կոչում, և նա նշանակվեց դիվիզիայի հրամանատար։

Բարձր պարգևը և կոչումը նոր պարտավորություններ էին դնում կռիվված հրամանատարի և նրա պանծալի դիվիզայի վրա։

Ռազմաճակատում Մ. Մաղաթյանը իր հարազատներից նամակ ստացավ, որի մեջ գրված էր.

«Սիրելի Մաթևոս.

Օրինական հպարտության վսեմ զգացմունքով եմ համակված ես։ Հպարտ եմ պատվի այդ խոր դիտակցությամբ, որ դու, իմ սիրելի ընկեր, քո միլիոնավոր եղբայրների հետ միասին մասնակցում ես ազատագրական այս մեծ պայքարին, որի ընթացքում որոշվում է մեր երկրի բախտը, մեր ժողովրդի բախտը, քո հարազատների բախտը։ Անսահման էր մեր ուրախությունը, երբ հաղորդագրություն ստացվեց քեզ կառավարության նոր բարձր պարգևին՝ Լենինի շքանշանին արժանացնելու մասին։

Թանկագին Մաթևոս. քեզ Լենինի շքանշանով պարգևատրելու առթիվ ինձ հետ միասին անհուն ուրախու-

թյամբ է համակված հայ ժողովուրդը։ Սովետական կինը կրկնակի բախտավոր է, երբ տեսնում է իր ամուսնու, իր սիրելի ընկերոջ հերոսությունը հայրենիքի համար մղվող պատերազմի բոցերի մեջ։

Ո՞ր կինը չի երազում այդ բանը, ո՞ւմ սիրտը չի բարախում իր մարտիկ ընկերոջ համար, նրա մատակարարական գործունեության համար։

Հպարտ են նաև երեխաները, որ ունեն քեզ նման հայր։ Ես նրանց դաստիարակում եմ այնպես, որպեսզի իրենց հայրենիքը սիրեն այնպես, ինչպես դու ես սիրում և թշնամուն ատեն այնպես, ինչպես դու ես ատում։

Ռազմաճակատի թերթերից մեկում կարդացի քո ստորաբաժանման մարտիկների սխրագործությունների մասին։

Սիրելի Մաթևոս. միլիոնավոր երեխաների արյունն է քեզ վրեժի կոչում։

Զմռռանաս, սիրելիս, որ ռազմի ահեղ դաշտից հաղթանակով վերադարձող քաջ մարտիկին ու հրամանատարին սպասում է հայրենիքի անհուն սերը, իսկ վախկոտին՝ նրա ատելությունն ու արհամարհանքը։

Վստահ ենք, որ կվերադառնաս հաղթանակով։

Ջերմագին բարևներով քո սիրելիներ՝ Արաքս, Բարոկ, Ռաֆիկ, Լաուրա։

23 օգոստոսի 1943 թ.»։

Ի պատասխան Մաթևոսի ընտանիքին՝ Մադաթյանի զորամասի մարտիկներ Գերոֆեևը, Բախմեղը, Օստապենկոն գրել են հետևյալ նամակը։

«Մենք չենք հիշում կյանքը մեծապես վտանգելու հետ կապված որևէ պատասխանատու խնդիր, որ դրված լիներ ստորաբաժանման առջև և կատարվեր առանց ստորաբաժանման հրամանատար ընկ. Մադաթյանի մասնակցության։ Նրա քաջության, հերոսության ու խիզախության օրինակները մեկը մյուսից ավելի փայլուն

են և մեկը մյուսից ավելի համոզիչ կերպով ցույց են տալիս իսկական բոլշևիկին մեր հրամանատարի մեջ, որը հաշվի չի առնում դժվարությունները, իր կյանքը չի խնայում թշնամու դեմ վերջնական հաղթանակ տանելու համար»[1]։

Ռազմաճակատի գիծը հասել էր Սերեց գետին։ Մեր զորամասերը կենտրոնացել էին Լվովի արևելյան մատույցներում։ Մադաթյանի զորամասն այդ ժամանակ արդեն մտնում էր առաջին Ուկրաինական ռազմաճակատի կազմի մեջ։ Սովետական Միության մարշալ Ի. Ս. Կոնևի ղեկավարած զորային միավորումները նախապատրաստվում էին նոր, ջախջախիչ հարված հասցնելու ֆաշիստական զորամասերին, մի հարված, որը ծունկի էր բերելու ֆաշիստական զորագնդերին և ազատագրելու էր Լվով քաղաքը։

Այդ վճռական օրերին գնդապետ Մադաթյանի զորամասը հրաման ստացավ ընդունել ձախ, առաջ շարժվել դեպի Շերեց բնակավայրը և պաշտպանական դիրքեր գրավել նրա արևելյան կողմում։

1944 թ. հուլիսի 26-ի առավոտյան ժամը 7-ին հորիզոնում սկսեցին փայլատակել կարմիր ռակետներ, այնուհետև գլարդիական ականանետը տվեց առաջին համազարկը՝ ընդհանուր հրետանային նախապատրաստության ազդանշանը։

Ամբողջ ռազմաճակատում միասին սկսեցին գործել բոլոր հրանոթները և ականանետները։ Նախապատրաստվում էր հետևակի հարձակումը։

Հրամայված էր լիկվիդացիայի ենթարկել Ռիդիխա գյուղի շրջանում ֆաշիստական զորքերի առաջացրած ճեղքվածքը և միանալ հարավում գտնվող մեր զորքերի հետ։ Այդ կռվում գումարտակներից մեկը, որի հրամա-

---

[1] «Սովետական Հայաստան», 13 դեկտեմբերի 1943 թ., № 292։

նատարն էր կապիտան Վասիլևը, ճեղքելով հակառակորդի պաշտպանության գիծը, թափով առաջ անցավ և անջատվեց մեր գնդից։ Հակառակորդը, նկատելով այդ, օղակեց նրան։ Ճակատից հարձակվում էր թշնամու հետևակը, իսկ թևերից խփում էին ավտոմատավորները։ Մեր զինվորները, օգտագործելով հակառակորդից գրավված խրամատները, սկսեցին կռվել։

Կռիվը տևեց երեք ժամ։ Ֆաշիստները ամեն մի հակադրոհից առաջ կատաղաբար ռմբակոծում էին մեր դիրքերը։ Տանկերից առաջ ուղարկում էին կործանիչ ավիացիան, փորձելով գնդացրային կրակի միջոցով ոչնչացնել սովետական հրետանու անձնակազմը, որը օժանդակում էր մեր դումարտակին։ Հիտլերականների այդ տակտիկան հաջողություն չունեցավ։ Հրետանու անձնակազմը ղեկավարող մայոր Կոստիկովը, դիմադրելով գերմանական հետևակի և տանկերի յոթ գրոհին, թույլ չտվեց թշնամու հետևակին ոչնչացնել անջատված միավորը։

Կռվի չորրորդ ժամին մեր զորամասը գնդապետ Մադաթյանի ղեկավարությամբ ճեղքեց հակառակորդի օղակումը և ազատեց շրջապատման մեջ ընկած դումարտակին։

Ֆաշիստները թիկունքի խորքից առաջին գիծն էին փոխադրում տանկեր և նոր ստորաբաժանումներ։

Գնդապետ Մադաթյանի զորամասը խրամատավորվել էր Շիթեց գյուղի հյուսիս-արևմտյան ճակատամասում։ Այդ հատվածում տեղի ունեցող կռիվները գնալով բորբոքվում էին։

Ավագ լեյտենանտ Գորդիևի ղեկավարությամբ գործող ստորաբաժանման մարտիկները պաշտպանության դիրք էին գրավել բարձունքի վրա։ Դեպի արևելք ձգտող թշնամին, ուժեր կենտրոնացնելով, պատրաստվում էր նոր գրոհի։ Կանխատեսելով գերմանացիների հարձակու-

մը, մերոնք սկսեցին խրամատավորվել և պատրաստել հակատանկային միջոցներ։ Օրվա վերջում, մոտավորապես մեկ վաշտ հիտլերականներ դիմեցին դեպի բարձունքը, որտեղ խրամատներում քողարկված էին մարտիկները։ Ֆաշիստները հինգ անգամ ավելի էին մերոնցից։ Թույլ տրվեց թշնամուն մոտենալ և դնդակների տարափ թափվեց նրա վրա։ Հարձակվող թշնամու առաջին շղթան համարյա ոչնչացավ, իսկ ետևից եկող շղթան պառկեց գետնին։ Այդ ժամանակ ականանձիգները սկսեցին կրակ բացել պառկածների վրա։ Հակառակորդը նկատելով, որ այդ դիրքում կռվելն ավելի մեծ կորուստներ է պատճառում, նորից անցավ գրոհի։ Այդ հիտլերականների չորրորդ գրոհն էր։ Բայց, կորցնելով զինվորների մեծ մասը, թշնամին ստիպված նահանջեց։ Քիչ անց բանակային Վասյա Իվանովը զեկուցեց հրամանատարին.

—Հակառակորդի տանկեր են գալիս։

—Թող գան, նրանց ևս դաս կտանք,— պատասխանեց ոտքից վիրավորված ավագ լեյտենանտ Գորդիևը։

Նա հրամայեց պատրաստել հակատանկային հրացան և մի քանի նռնակներ։ Սովետական մարտիկները աչալուրջ հետևում էին զրահապատված թշնամուն։ Ֆաշիստներն իրենց մեկ տանկը թանդ էին դնահատում հունգարական դումարտակից։ Այդ նպատակով էլ տանկերից առաջ բաց թողեցին հունգարական դումարտակը։ Երբ հունգարացիները բավականաչափ մոտեցան, սովետական զինվորները դիմավորեցին նրանց ուժեղ կրակով։

Թշնամու հարձակվող զորքերի շարքերը հետզհետե նոսրանում էին, բայց նա չէր հրաժարվում նորանոր գրոհներից։ Գվարդիականները մոտեցող թշնամուն դիմավորեցին նռնակներով, սակայն ուժերի քանակային գերազանցության շնորհիվ հակառակորդին հաջողվեց շրջանցել բարձունքը և օղակել գվարդիականներին։

Այդ ժամանակ օդնության հասավ «Կատյուշան»։ Մի քանի համազարկից հետո թշնամին դիմեց փախուստի, և գվարդիականները, հակագրոհի դիմելով, բարձունքը մաքրեցին ֆաշիստական զորքերից։

Վրա հասավ դիշերը։ Բարձունքի վրա ոչ ոք քնած չէր։ Բոլորը զբաղված էին վաղվա մարտերի նախապատրաստություններով։ Լուսադեմին գվարդիականները նկատեցին, որ ուղղակի իրենց վրա են գալիս ֆաշիստական 19 տանկ։ Գվարդիականները չունեին հակատանկային հրանոթներ, բայց ունեին հակատանկային հրացաններ, հակատանկային նռնակներ և, որ գլխավորը՝ էլ, հաղթելու կամք։

— Մենք բոլորս կոմերիտականներ ենք,— դիմեց նրանց հրամանատարը։ Չարատավորենք գվարդիական մեր դրոշը, պետք է հետ մղենք ֆաշիստների գրոհը։

Գվարդիականները, սեղմելով միմյանց ձեռք, դրավեցին դիրքերը և սպասեցին հակառակորդի տանկերին։

Տանկերը, փոթորկալի կրակ տեղալով, հրեշի նման սողում էին դեպի բարձունքը։

Սկսվեց անհավասար մարտը։ Գվարդիականներից Եֆրեյտոր Ստեփանյանը հակատանկային հրացանի կրակով բոցավառեց առաջին տանկը։ Հակառակորդի տանկիստները, նկատելով հակատանկային հրացան, նետվեցին այդ ուղղությամբ և թրթռոտներով տրորեցին կրակային կետը։ Գվարդիականները կիզող ատելությամբ սկսեցին վրեժ լուծել։ Կարմիր բանակայիններ Շուտկովը և Չերկովը, նռնակների կապոցները վերցրած, նետվեցին դեպի տանկերը։ Այրվեցին դարձյալ երկու տանկ։ Վիրավոր ավագ լեյտենանտ Գորդիևը սողալով հասավ սպանված գնդացրորդին, վերցրեց նրա հակատանկային հրացանը և մի քանի գնդակով շարքից հանեց ևս երկու տանկ։

23 գվարդիականներից կենդանի էին մնացել միայն 17-ը։ Գերմանական տանկերը հարձակվեցին նրանց վրա։

Նրանք չհեռացան կռվի դաշտից, որոշելով ոչնչացնել նաև մնացած տանկերը։ Վիրավոր հրամանատարի գլխավորությամբ հերոսները վերցրին նռնակների կապոցները և «Կեցցե՛ մեր Հայրենիքը» բացականչությամբ գրոհեցին գեղի տանկերը։

Ֆաշիստական տանկերից մնացել էին 7-ը, որոնք նահանջեցին գեղի իրենց դիրքերը։

Հրամանատարությունն ըստ արժանվույն գնահատեց հերոսների մատուցած ծառայությունները։ Նրանք արժանացան բարձր մարտական շքանշանների, իսկ ավագ լեյտենանտ Գորդիևը պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Երթի ժամանակ առանձնապես աչքի ընկավ փոխգնդապետ Կոչտովի գունդը։ Թշնամին ամրացել էր և իր ուժերի մեծ մասը կենտրոնացրել Լեժանցև և Գրիմիրով բարձունքների վրա։ Դա նրա վերջին և ուժեղ պաշտպանության դիծն էր։

Այդ բարձունքների համար երկու օր ու գիշեր անընդհատ ու դաժան մարտեր էին մղվում։ Արևելյան կողմում բլուրների հետևը գնդապետ Մադաթյանը դասավորել էր գնդի հրետանավորներին։ Երկու օր, գիշեր-ցերեկ թշնամու վրա տեղատարափ արկեր ու ականներ թափվեցին, քար ու քանդ արվեցին բարձունքների վրա գտնվող հակառակորդի կրակարները, դզոտները։ Դիվիզիայի ձախ թևը հասնում էր Լիսա գետին, առջևում ճահիճներ էին։ Սովետական ռազմիկների համար չափազանց անհարմար էր վայրը։ Ամբողջ հարցն այն էր, որ խրամատավորվել չէր լինում։ Փորվող ավազի միջից ջուր էր բարձրանում։ Եվ հենց ավազի ջրի մեջ նրանք պառկում կամ նստում էին։

Զգաստարող կատաղի մարտերից հետո դիվիզիան հյուծեց հակառակորդին։ Սովետական քաջարի ռազմիկները թշնամուն ոչ զիշերն էին հանգիստ տալիս, ոչ ցերեկը։ Անընդհատ գրոհում էին նրա խրամատների վրա, ոչնչացնում դզոտները։ Այդ մարտերի ամբողջ ընթացքում զնդապետ Մադաթյանը, շտաբի սպաները, քաղբաժնի հրահանգիչներն անընդհատ լինում էին խրամատներում, բլինդաժներում, ոգևորում և քաջալերում էին ռազմիկներին։

Սկսվեց զիշերային երթը։ Արևմուտքից փչող անձրևախառն քամին զգալի կերպով դժվարացնում էր մեր զորքերի առաջխաղացումը։

Զորամասերը խնդիր էին ստացել ազատագրել Վիսլայի արևմտյան ափում գտնվող Սանդոմիր քաղաքը։ Մեր զորամասերը, զիշերվա ընթացքում անցնելով Վիսլա գետը, կենտրոնանալով Սանդոմիրից 5—8 կիլոմետրը արևելք Լեժանսկ և Գրիմբուկ վայրերի շրջանում, սպասում էին նոր հրամանի։

Վիսլայի վրայով գետանցը կատարվեց օգոստոսի 17-ի զիշերը. խիզախ սակրավորներն անցան գործի և մինչև լուսաբաց գետի մյուս կողմն անցկացրին միավորումներին։ Անցնելով գետը, ռազմաճակատի զորքերը համառ մարտերով առաջ շարժվեցին 50 կիլոմետր, ընդլայնեցին Վիսլայի արևմտյան ափում գրաված պլացդարմը մոտ 120 կիլոմետր ճակատով։ Այդ տարածության վրա միավորումները մի քանի օր համառ մարտեր էին մղում հակառակորդի դեմ։ Պլացդարմը լիկվիդացիայի ենթարկելու ֆաշիստների բոլոր փորձերը ձախողվեցին։

Երրորդ օրը լուսադեմին դիվիզիան անցավ հարձակման, գրավեց Լեժանսկ և Գրիմբուկ բնակավայրերը և ճանապարհ բաց արեց դեպի Սանդոմիր քաղաքը։ Սակայն դրանից հետո էլ շարունակվում էին դաժան մար-

տերը։ Գրիմբուկ գյուղի հենց վերևում, Սանդամիր պլացդարմի ձախ թևում գտնվող բարձունքի վրա, օգոստոսի 14-ի լույս 15-ի գիշերը մղվեցին ամենածանր մարտերը։ Բարձունքի երկու կողմից Մադաթյանի զորամասերը դուրս էին եկել գետափ, շրջապատել էին ֆաշիստական զորքերին, որոնք ձգտում էին մի կերպ փրկել իրենց մնացորդները։

Աստղազարդ գիշեր էր։ Ցամաքի վրա երկու կողմից մերոնք թշնամուն վերցրել էին ակտանտատային և հրետանային կրակի տակ։

Հինգ վեց կիլոմետր տարածության վրա գետինը դողում էր, ասես երկրաշարժը տարուբերում էր հսկայական դաշտը։

Լուսարձակներն իրենց վիթխարի և բեկ-բեկ լեզուներով լիզում էին մթին ավող ջրերը։ Ֆաշիստները ծխաքողարկման ամպերով տեղ-տեղ ծածկել էին Վիսլան, որպեսզի իրենց ուժերի մնացորդները դուրս բերեն կրակի տակից։

Սովետական սավառնորդները խորընթաց իջնում էին գրեթե ալիքներին քսվելով, անընդհատ ռմբակոծում էին ու ռմբակոծում։

Երկու կողմից էլ գործում էր զենիթային հրետանին։ Օդը լցված էր սավառնակների հոնդյունով, պայթող արկերի որոտով ու ծխով։

Սանդոմիր քաղաքի աղատության արշալույսը բացվում էր Սովետական զենքի ահեղ բոցերի լույսով։

Մադաթյանի զորամասի շտաբը գտնվում էր գետի աջ ափին՝ Գրիմբուկ քաղաքի հյուսիսում գտնվող բլրակում։

Գնդապետ Մադաթյանը իր դիտակետն ընտրել էր անմիջապես գետի ափի թփուտներով պատած բլրակում, որտեղից պարզ երևում էր միավորումների գործողությունը։ Գումարտակները դեռևս նոր էին ընտրել իրենց

պաշտպանության դիրքերը, և մարտիկները զբաղված էին խրամատներ փորելով, երբ Մադաթյանի միավորումների վրա տեղացին գերմանական հրետանային և ականանետային համազարկերը։ Կարճ, բայց ահեղ հրետանային նախապատրաստությունից հետո տանկերի ուղեկցությամբ գերմանացիներն անցան հարձակման։

Դիվիզիայի հրամանատարը գործողության մեջ մտցրեց իր տրամադրության տակ եղած հրետանային բոլոր ստորաբաժանումները։

Ահեղ ճակատամարտից հետո հակառակորդը հետ մղվեց իր ելման դիրքերը։ Սակայն թշնամին իր կրած ծանր կորուստներից հետո էլ թարմ ուժեր բերելով, նորից դիմեց հակագրոհի։

Վաղ արշալույսին հակառակորդը նորից սկսեց հրետանա-ականանետային ուժեղ կրակ վարել մեր մարտակարգերի վրա, միաժամանակ գործողության մեջ մտցնելով իր հետևակի առաջին էշելոնի ուժերը։

Մեր հրետանային մարտկոցները իրենց արդելափակիչ կրակով հնարավորություն չտվին հակառակորդին գործողության մեջ մտցնելու հետևակի երկրորդ էշելոնը։

Մեր զորամասը թշնամուն հարվածեց ձախ թևից և նրա հետ համառ մարտի բռնվեց Վիսլա գետի արևմտյան կողմում գտնվող 173,1 բարձունքի հյուսիս-արևելյան լանջին։ Հարևան զորամասերի հետ միասին կոտրելով թշնամու դիմադրությունը, հաղթահարելով նրա կողմից ստեղծված արգելքները Մադաթյանի միավորումների զինվորները քայլ առ քայլ առաջ էին գնում։ Չդիմանալով զրոհող դումարտակների հարվածներին, գերմանացիները փորձեցին վերախմբավորել իրենց ուժերը՝ մեր հարձակվող ստորաբաժանումների առաջխաղացումը կանխելու նպատակով։

Դիվիզիայի հրամանատարի հրամանի համաձայն երկրորդ գնդի միավորումները աջ թևից հարձակում սկսեցին բարձունքի ուղղությամբ։

Ճակատամարտը հաջողությամբ ավարտելու համար գլխավոր հարվածն ուղղված էր հակառակորդի թևերի վրա, նպատակ ունենալով դուրս գալ նրա պաշտպանության խորքը և նրան խլել թիկունքից։ Այդ նպատակով վերադասավորելով ստորաբաժանումները, կռվի մեջ մտցնելով ռեզերվները, հմուտ մանյովրներով Մադաթյանի դիվիզիայի զորամասերը անցան թշնամու թիկունքը և հարվածեցին նրան թիկունքից։ Իրենց սպառնացող շրջապատման վտանգից դուրս գալու և գլխովին ջախջախվելուց խուսափելու համար գերմանացիները դիմեցին խուճապային նահանջի, մարտի դաշտում թողնելով մեծ թվով դիակներ և ջարդված տեխնիկա։

Սկսեց գործել մեր ավիացիան։ Հակառակորդը, ընկնելով մեր ավիացիայի և հրետանային կրակի տակ, ստիպված ժամանակավորապես դադարեցրեց կրակը. այդ ժամանակ առաջացան սովետական տանկային զորամասերը, որոնց հետևից շարժվում էր հետևակը։

Վիսլան անցնելու ժամանակ և Սանդոմիրի պլացդարմը գրավելու համար մղված մարտերում գեներալ-լեյտենանտներ Ժադովի, Պուխովի և մյուս զորքերի շարքերում աչքի ընկան նաև գնդապետ Մադաթյանի զորամասերը։

Ի շնորհավորումն ձեռք բերված հաղթանակի, Վիսլան անցնելու և Սանդոմիրի պլացդարմը գրավելու համար մղված մարտերում աչքի ընկնելու համար Մադաթյանի զորամասին շնորհվեց «Սանդոմիրյան» և «Վիսլայան» անունները։

* * *

Սովետա-գերմանական ռազմաճակատի կենտրոնական հատվածներում Սովետական Բանակի զորամասերը, կոտրելով հակառակորդի դիմադրությունը, հաջողությամբ առաջ էին շարժվում։

1945 թ. ապրիլի 15-ից մինչև 18-ը մեր զորքերի կենտրոնական խմբի շրջանում կատարվում էր մարտերով հետախուզություն, որը վերաճեց Օդեր և Նեյսե գետերի ափերին պլացդարմեր գրավելու և ընդարձակելու համար մղվող մարտերի։ Այդ մարտերի շնորհիվ մեր զորքերը Դրեզդենի ուղղությամբ անցան Նեյսե գետը և գրավեցին Մուսկայ, Վայսվասսեր քաղաքները։

Դրեզդենի համար մղած ճակատամարտերում մեծ հաջողությունների հասավ նաև Մադաթյանի զորամասը, որը, գերմանացիների վրա գրոհելով հյուսիսից, հյուսիս արևմուտքից և արևելքից, օղակի մեջ առավ քաղաքը և մայիսի 8-ին գրավեց այն։

Շարունակելով հրաձակումը, Ուկրաինական 1-ին ռազմաճակատի զորքերը տանկային միավորումների ու հետևակի դիշերային սրընթաց մանևրի հետևանքով կոտրեցին հակառակորդի դիմադրությունը և մայիսի 9-ի առավոտյան ժամը 4-ին գերմանական զավթիչներից ազատագրեցին Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրագան։

Պրագայի ազատագրման համար մղած մարտերում աչքի ընկած զորքերի շարքերումն էր նաև Մաթևոս Մադաթյանի զորամասը։

Քաղաքի ազատագրման առաջին օրերն էին։ Նրա բազմահազար բնակիչները մեծ հրճվանքով էին խոսում սովետական քաջարի բանակի տարած պատմական հաղթանակների մասին։ Կենդանացել էին Պրագայի փողոց-

ները, կարծես արևելքից եկած արեգակի շողքերը կյանք էին տվել նրան։

Մարդկանց բազմությունը ձգտում էր դեպի քաղաքի կենտրոնը։ Աշխուժություն էր առաջացել բոլորի մեջ, վազում էին երիտասարդները, մրցում միմյանց հետ առաջինը տեսնելու սովետական տանկերը, որոնք առաջին անգամ մտան Պրագա։

Աշխույժ զրուցում էին աղջիկները։ Կանանցից շա-

Նկ. 7. Պրագայի ազատագրումը սովետական զորքերի կողմից

տերը գնում էին երեխաների ձեռքերը բռնած, հայրերն իրենց ուսերի վրա էին բարձրացրել մանուկներին, որպեսզի մարդկանց գլուխների վրայից հնարավոր լիներ տեսնելու սովետական տանկիստներին։

Փողոցներում մարդիկ հանդիպում և ջերմորեն ողջունում էին տանկային զորամասերի մարտիկներին, սպաներին ու գեներալներին։ Մերձքաղաքային ռայոնների բազմահազար բնակիչները գալիս էին կարմիր դրո-

շակներով, գալիս էին ողջունելու իրենց մայրաքաղաքի ազատարարներին։

Ծաղկեփնջերով կանայք ու տղամարդիկ, երիտասարդներ ու ծերունիներ շարժվում էին դեպի քաղաքի հրապարակը։ Առաջին հանդիպած մարտիկին նրանք հանձնում էին ծաղկեփնջեր։

Պրագայի Կրեմլի վրա ազատ ծածանվում էր Չեխոսլովակյան դեմոկրատական ռեսպուբլիկայի երեք գույնի դրոշը։ Ժողովուրդը հավաքված էր միտինգի։ Միտինգը բացվում է։ Տրիբունի վրա են բարձրանում սովետական գեներալները, չեխոսլովակյան դեմոկրատական ռեսպուբլիկայի կառավարության անդամները։

Պրագան այդ օրը ցնծում էր, նրա՝ արևով ողողված պողոտաները զարդարվել և շքեղ տեսք էին ընդունել։ Ստալինի անվան պողոտայում խելահեղորեն արբեցած աղատության մաքուր օդից հավաքվել էին տասնյակ հաղարավոր պրագացիներ։ Պրագան տոնում էր հաղթանակը օվացիաների փոթորկի, կիլոմետրերի տարածությամբ ձգվող ամբոխի միջով անցնում են հաղթողների տանկերը։ Ծաղիկներով զարդարված նրանք անցնում են մարդկային ծովի միջով, ինչպես հսկայական կենդանի ծաղկեփնջեր։ Իսկ տանկերի վրա նստած են երիտասարդ ավտոմատավորները ժպիտները դեմքերին։ Առանձնապես ցնծալի էր դեպի Գեբերնյան փողոցի չորս հարկանի շենքը գնացող մասսաների, գեներալների, սպաների և զինվորների շքերթը։ Այդ շենքում 1912 թվականին Լենինի ղեկավարությամբ կայացել էր Բոլշևիկյան պարտիայի Պրագայի կոնֆերանսը։

* *

Մաթևոս Մադաթյանը շարքային կարմիր բանակայինից հասնում է գնդապետի կոչման, դիվիզիայի հրամանատարի պաշտոնին։

Սովետական կառավարությունը, գնահատելով Մադաթյանի ծառայությունները Հայրենիքի հանդեպ և նկատի ունենալով նրա հերոսությունները Հայրենական Մեծ պատերազմի ռազմաճակատներում, պարգևատրում է նրան Լենինի 2, Կարմիր դրոշի 3, մեկ Կարմիր աստղի շքանշաններով և 6 մեդալով։

Լեհաստանի տերիտորիան մաքրելու և ժողովրդին ֆաշիստական ճիրաններից ազատագրելու գործին ունեցած մասնակցության համար Մադաթյանը պարգևատրվում է լեհական կառավարության մարտական բարձր շքանշանով, իսկ Պրագան ազատագրելու համար՝ չեխոսլովակյան բարձր մարտական խաչով և ամերիկյան կառավարության բարձր շքանշանով։

Իր մարտական գործերի համար Մադաթյանը արժանանում է Գերագույն Գլխավոր հրամանատարության վեց շնորհակալություններին։

Հայրենական պատերազմի ավարտումից հետո, 1954 թ. հրամանատարության առաջադրանքները կատարելու ժամանակ ընկնում է հայ ժողովրդի անվեհեր զավակ, դիվիզիայի հրամանատար գնդապետ Մաթևոս Մադաթյանը, իր մարտական պոստում։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ

Բաբկեն Սիրականի Մելքոնյան

ԳՆԴԱՊԱՏՑ ՄԱԹԵՎՈՍ ՄԱԴԱԹՅԱՆ

Պատ. խմբագիր Հ. Ս. Կարապետյան
Հրատ. խմբագիր Էմ. Ա. Պիվազյան
Տեխ. խմբագիր Լ. Ա. Ազիզբեկյան
Վերստուգող սրբագրիչ Ս. Վ. Մարգարյան

ՎՖ 07675 Հրատ. 1348 Տիրաժ 2000 Պատվեր 377 ԽՀԽ № 378

Հանձնված է արտադրության 24/IX 1956 թ.։ Ստորագրված է տպագրության 6/XII 1956 թ.։ Հրատ. 3,8 մամուլ, տպագր. 6,5 մամուլ + 1 ներդիր, թուղթ 84×108¹/₃₂։ Գինը 1 ռ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ. տպարան, Երևան, Աբովյան, 124։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220032780

ԳԻՆԸ 1 ՌՈՒ. (104)

II
32780